Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Առաջին
դասագիրք
Ճանաչում

491.99-8
Ա-70

1869

8

[illegible] Armenian.

491·99-8
Q-70

7885




ԹՈ՛Ղ ՏՈՒԷՔ ԱՏ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ
ԳԱՆ, ԵՒ ՄԻ ԱՐԳԻԼԷՔ ԱՏՈՆՔ. ԻՆ-
ՉՈՒ ՈՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒ-
ԹԻՒՆԸ ԱՏԱՆԿՆԵՐՈՒՆՆ Է:
Մարկ. Ժ. 14:

491-99-8
1005-1Ա
Ա-70

# ԱՌԱՋԻՆ

# ԴԱՍԱԳԻՐՔ ՄԱՆԿԱՆՑ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԵՕՐՔ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՏԵՏՐԱԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1869

13 FEB 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

62295-67

# ԱՌԱՋԻՆ

## ԴԱՍԱԳԻՐՔ ՄԱՆԿԱՆՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

---

## ԱՅԲՈՒԲԵՆ

ԵՐԿԱԹԱԳԻՐ

---

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ

Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ

Ղ Ճ Մ Յ Ն Շ Ո

Չ Պ Ջ Ռ Ս Վ

Տ Ր Ց Ւ Փ

Ք Օ Ֆ

## ԲՈԼՈՐ ԳԻՐ

ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ
ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ
տ ր ց ւ փ
ք և օ ֆ

## ՆՕՏՐ ԳԻՐ

ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ
ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ
տ ր ց ւ փ
ք և օ ֆ

## ՁԱՅՆԱՒՈՐ ԳՐԵՐ

ա ե է ը ի ո ւ օ



## ՀԵԳ

### ԵՐԿԱԳԻՐ ՎԱՆԿԵՐ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| աբ | ագ | ադ |ազ | աթ | աժ |
| եբ | եգ | եդ | եզ | եթ | եժ |
| էբ | էգ | էդ | էզ | էթ | էժ |
| ըբ | ըգ | ըդ | ըզ | ըթ | ըժ |
| իբ | իգ | իդ | իզ | իթ | իժ |
| ոբ | ոգ | ոդ | ոզ | ոթ | ոժ |
| օբ | օգ | օդ | օզ | օթ | օժ |
| ուբ | ուգ | ուդ | ուզ | ութ | ուժ |
| իւբ | իւգ | իւդ | իւզ | իւթ | իւժ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| էլ | էխ | էծ | էկ | էհ | էձ |
| ալ | ախ | ած | ակ | ահ | աձ |
| ել | եխ | եծ | եկ | եհ | եձ |
| ըլ | ըխ | ըծ | ըկ | ըհ | ըձ |
| իլ | իխ | իծ | իկ | իհ | իձ |
| ոլ | ոխ | ոծ | ոկ | ոհ | ոձ |
| օլ | օխ | օծ | օկ | օհ | օձ |
| ուլ | ուխ | ուծ | ուկ | ուհ | ուձ |
| իւլ | իւխ | իւծ | իւկ | իւհ | իւձ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| իղ | իճ | իմ | իյ | ին | իշ |
| աղ | աճ | ամ | այ | ան | աշ |
| եղ | եճ | եմ | եյ | են | եշ |
| էղ | էճ | էմ | էյ | էն | էշ |
| ըղ | ըճ | ըմ | ըյ | ըն | ըշ |
| ող | ոճ | ոմ | ոյ | ոն | ոշ |
| օղ | օճ | օմ | օյ | օն | օշ |
| ուղ | ուճ | ում | ույ | ուն | ուշ |
| իւղ | իւճ | իւմ | իւյ | իւն | իւշ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| օչ | օպ | օջ | օռ | օս | օվ |
| աչ | ապ | աջ | առ | աս | ավ |
| եչ | եպ | եջ | եռ | ես | եվ |
| էչ | էպ | էջ | էռ | էս | էվ |
| ըչ | ըպ | ըջ | ըռ | ըս | ըվ |
| իչ | իպ | իջ | իռ | իս | իվ |
| ոչ | ոպ | ոջ | ոռ | ոս | ով |
| ուչ | ուպ | ուջ | ուռ | ուս | ուվ |
| իւչ | իւպ | իւջ | իւռ | իւս | իւվ |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| իւտ | իւր | իւց | " | իւփ | իւք | իւֆ |
| ատ | ար | աց | աւ | ափ | աք | աֆ |
| ետ | եր | եց | եւ | եփ | եք | եֆ |
| էտ | էր | էց | " | էփ | էք | էֆ |
| ըտ | ըր | ըց | " | ըփ | ըք | ըֆ |
| իտ | իր | ից | իւ | իփ | իք | իֆ |
| ոտ | որ | ոց | ու | ոփ | ոք | ոֆ |
| օտ | օր | օց | " | օփ | օք | օֆ |
| ուտ | ուր | ուց | " | ուփ | ուք | ուֆ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| բա | գա | դա | զա | թա | ժա |
| բե | գե | դե | զե | թե | ժե |
| բէ | գէ | դէ | զէ | թէ | ժէ |
| բը | գը | դը | զը | թը | ժը |
| բի | գի | դի | զի | թի | ժի |
| բո | գո | դո | զո | թո | ժո |
| բօ | գօ | դօ | զօ | թօ | ժօ |
| բու | գու | դու | զու | թու | ժու |
| բիւ | գիւ | դիւ | զիւ | թիւ | ժիւ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| լե | խե | ծե | կե | հե | ձե |
| լա | խա | ծա | կա | հա | ձա |
| լէ | խէ | ծէ | կէ | հէ | ձէ |
| լը | խը | ծը | կը | հը | ձը |
| լի | խի | ծի | կի | հի | ձի |
| լո | խո | ծո | կո | հո | ձո |
| լօ | խօ | ծօ | կօ | հօ | ձօ |
| լու | խու | ծու | կու | հու | ձու |
| լիւ | խիւ | ծիւ | կիւ | հիւ | ձիւ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ղը | ճը | մը | յը | նը | շը |
| ղա | ճա | մա | յա | նա | շա |
| ղե | ճե | մե | յե | նե | շե |
| ղէ | ճէ | մէ | յէ | նէ | շէ |
| ղի | ճի | մի | յի | նի | շի |
| ղո | ճո | մո | յո | նո | շո |
| ղօ | ճօ | մօ | յօ | նօ | շօ |
| ղու | ճու | մու | յու | նու | շու |
| ղիւ | ճիւ | միւ | յիւ | նիւ | շիւ |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| չո | պո | ջո | ռո | սո | վո |
| չա | պա | ջա | ռա | սա | վա |
| չե | պե | ջե | ռե | սե | վե |
| չէ | պէ | ջէ | ռէ | սէ | վէ |
| չը | պը | ջը | ռը | սը | վը |
| չի | պի | ջի | ռի | սի | վի |
| չօ | պօ | ջօ | ռօ | սօ | վօ |
| չու | պու | ջու | ռու | սու | վու |
| չիւ | պիւ | ջիւ | ռիւ | սիւ | վիւ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տու | րու | ցու | ւու | փու | քու | ֆու |
| տա | րա | ցա | ւա | փա | քա | ֆա |
| տե | րե | ցե | ւե | փե | քե | ֆե |
| տէ | րէ | ցէ | ւէ | փէ | քէ | ֆէ |
| տը | րը | ցը | ւը | փը | քը | ֆը |
| տի | րի | ցի | ւի | փի | քի | ֆի |
| տո | րո | ցո | ւո | փո | քո | ֆո |
| տօ | րօ | ցօ | ւօ | փօ | քօ | ֆօ |
| տիւ | րիւ | ցիւ | ւիւ | փիւ | քիւ | ֆիւ |



ԱՍ ԵԶ ՄԸՆ Է ։

| | |
|---|---|
| Է՛հ, ան է | Ո՛հ, դի մը |
| Ես ո՛չ եմ | Թէ որ ան է |
| Սա չէ՞ որ | Դա աղ չէ՞ |
| Ցօ է ատ | Եղ աղ առ |
| Եկ առ իս | Էգ էշ մը |
| Օր մը, հա՞ | Ո՛վ է աս |
| Օ՛ն, ել եկ | Հօ, լու մը |
| Ո՛ւհ, օձ մը | Նու բու մը |
| Այ աս իմն է | Ո՛ւր ես դու |



## ԵՌԱԳԻՐ ԲԱՌԵՐ ՄԻԱՎԱՆԿ

| | | | |
|---|---|---|---|
| Բաց | Քար | Բան | Շահ |
| Հաց | Տար | Լան | Մահ |
| Թաց | Լար | Վան | Գահ |
| Խած | Վառ | Համ | Վախ |
| Մած | Բառ | Գամ | Ձախ |

| | | | |
|---|---|---|---|
| Բեր | Մեծ | Ճեղ | Բեն |
| Գեր | Խեց | Մեղ | Գեն |
| Վեր | Մեղ | Տեղ | Զեն |
| Լեռ | Ձեղ | Գեղ | Թեմ |
| Քեռ | Քեղ | Դեղ | Ջեմ |

| | | | |
|---|---|---|---|
| Հէզ | Պէս | Խէթ | Խէչ |
| Վէզ | Կէս | Գէթ | Մէջ |
| Մէզ | Վէս | Վէտ | Գէճ |
| Մէկ | Դէզ | Մէտ | Վէճ |
| Շէկ | Սէզ | Գէտ | Խէժ |

| | | | |
|---|---|---|---|
| Գին | Գիր | Ցից | Քիթ |
| Վին | Դիր | Լից | Վիթ |
| Գիմ | Ժիր | Բիծ | Շիթ |
| Դիմ | Լիր | Գիծ | Շիշ |
| Հիմ | Հիռ | Լիճ | Վիզ |

| | | | |
|---|---|---|---|
| Փոս | Հոն | Քող | Ցօղ |
| Հոս | Գոն | Մօր | Բօթ |
| Բոց | Մոմ | Տօն | Շօթ |
| Գոց | Գոմ | Ձօն | Մօտ |
| Հոծ | Ծոմ | Թօն | Հօտ |

| | | | |
|---|---|---|---|
| Մութ | Տուն | Բիւր | Հիւղ |
| Գութ | Շուն | Դիւր | Ճիւղ |
| Թութ | Քուն | Ծիւր | Գիւղ |
| Դուռ | Հում | Խիւս | Հիւթ |
| Բուռ | Քում | Կիւս | Գիւտ |

| | | | |
|---|---|---|---|
| Անդ | Այտ | Երդ | Երբ |
| Աչք | Այր | Ենթ | Երգ |
| Անկ | Այն | Եղկ | Երր |
| Աղտ | Այս | Եղծ | Էշք |
| Արտ | Այգ | Երկ | Էջք |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդ | Իսկ | Օգն | Ուղ |
| Ըստ | Ողբ | Ութ | Ուժ |
| Իղձ | Ողջ | Ուր | Ուս |
| Ինձ | Ոտն | Ուլ | Իւղ |
| Ինչ | Որթ | Ուշ | Իւր |



| | | | |
|---|---|---|---|
| Բայ | Դեւ | Դաւ | Քոյ |
| Վայ | Ձեւ | Նաւ | Նոյ |
| Հայ | Թեւ | Բաւ | Գոյ |
| Թէյ | Խեւ | Խաւ | Ոյծ |
| Խոյ | Քեւ | Ցաւ | Ոյժ |

## ՔԱՌԱԳԻՐ ԲԱՌԵՐ ՄԻԱՎԱՆԿ

| | | | |
|---|---|---|---|
| Վանք | Մաղձ | Մենք | Զեղխ |
| Ջանք | Քաղց | Մեղկ | Զեղծ |
| Լանք | Գանձ | Շերտ | Զեղջ |
| Բարք | Տանձ | Շեղջ | Մերկ |
| Վարք | Պարտ | Շեշտ | Ձեռք |

| | | | |
|---|---|---|---|
| Շէնք | Դիրտ | Խորք | Խօսք |
| Վէրք | Գիրք | Գորգ | Դրօշ |
| Զէնք | Թինդ | Գործ | Հօտք |
| Դէմք | Լիրբ | Հողմ | Քօղք |
| Դէպք | Խինդ | Յոխտ | Ցօղք |

| | | | |
|---|---|---|---|
| Քուրձ | Ճիւղձ | Յայտ | Լոյս |
| Քուրմ | Հիւսն | Փայտ | Յոյս |
| Մուրճ | Հիւրք | Լայն | Քոյր |
| Մուշկ | Ձեօք | Հայր | Զոյգ |
| Թուղթ | Մեօք | Մայր | Մոյթ |



ԿԱՏՈՒ

առու · ծախու
հասու · տարու



ՇՈՒՆ

բուն · մուն
տուն · քուն



ՄԱՐԴ

յարդ · զարդ
բարդ · սարդ



ՈՒԼ

գուլ · դուլ
խուլ · ցուլ



ՃԱՆՃ

մաճ · թանչ
գաղջ · կարճ



ԱՐԵՒ

անձրեւ
տերեւ



ՀԱՒ

նաւ · թաւ
լաւ · ցաւ



ՄԱՀԻՃ

կարիճ · դահլիճ
կաւիճ · դահիճ



ԹՈՒԶ

կուզ
խուզ



## ԵՐԿԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | | |
|---|---|---|
| Ան նա | Խօ նարհ | Ձար ակն |
| Խա ղի | Ծա ռայ | Պա րան |
| Գա ւիթ | Կա պայ | Ճըն ջոց |
| Գա ւիթ | Հան դերձ | Ոս տին |
| Ե րէկ | Ձը րի | Սա միթ |
| Զօ րեղ | Դէն ջակ | Վար սակ |
| Ի ակ | Ճա րակ | Տօմ սակ |
| Ըն տիր | Մա նուկ | Րա բուն |
| Թե թեւ | Յա ջող | Ցե րեկ |
| Ժա ռանգ | Նա ւակ | Փա ղանգ |
| Իր րեւ | Շը ղըթայ | Քա րող |
| Լը բուռն | Ո րայ | Օ ծումն |

| | | |
|---|---|---|
| Գա զան | Ա մոք | Եղ բայր |
| Զա ւակ | Ա տոք | Քա բոյր |
| Աստ ուած | Ա նոք | Փայ տատ |
| Հաստ ուած | Շը նորհք | Ծայ րատ |
| Տըր ուիլ | Աշ խարհք | Եր բեմն |
| Գամ ուիլ | Հո վիւ | Ե ղած |
| Անձ րեւ | Ար ծիւ | Ըն տել |
| Խա րեւ | Վ ատ եակ | Ըն ձիւղ |
| Ծա րաւ | Քաւ եակ | Ա պուշ |
| Տա րաւ | Մի ակ | Ա պուր |



62295-67
Гос Библиотека Арм ССР им. А. Мясникяна

ՄԱՂԹԱՆՔ

Ո՛վ Տէր Աստուած իմ,
Օրհնէ զիս հիմա.
Որ կարգաւ սորվիմ,
Ըլլամ լաւ տղայ :

Թէ որ դուն չօգնես,
Ջանքերըս զուր են.
Ո՛վ իմ Աստուածըս
Օրհնէ զիս վերէն :

---

Հոս Գառնուկ մը կայ : Անիկայ միտքերնիդ չը՞ձգեր Աստուծոյ Գառը որ չմեղանչեց, և իր վրայ արատ մը չունէր : Աղօթք ըրէ՛ք անոր՝ որ իր մէջն եղած միտքը ձեր մէջն ալ դնէ :







Տես աս աղաւնին : Անիկայ հեզ և բարի թռչուն մըն է, ու մնաս չըներ : Երբոր երկուք կամ իրեք մի և նոյն բոյնին մէջ ըլլան, սիրով կը բնակին մէկզմէկու հետ : Յովհաննէսն ու Աննան, և ամէն տղայ ու աղջիկ պարտական են ջանք ընել՝ որ բարի և բարերար ըլլան : Աստուծոյ Որդին՝ որ մեռաւ մեզ մեղքէ ազատելու համար, կրնայ օգնել ձեզի որ հեզ և խոնարհ ըլլաք աղաւնիին պէս :

---

| | | |
|---|---|---|
| Վայրկեան | Օր | Ամիս |
| Րոպէ | Գիշեր | Տարի |
| Ժամ | Եօթնեակ | Դար |

## ԵՌԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | | |
|---|---|---|
| Վար ժա պետ | Կա ղա մար | Ա րա րիչ |
| Ա շա կերտ | Զը մե լին | Բա րե գործ |
| Դըպ րա տուն | Ձե ռա գիր | Ո ղոր մած |
| Դա սա տու | Թը ուա բան | Հո գե սէր |
| Գըր քա տուն | Պատ մա գէտ | Բա րե բար |
| Կա ղա մար | Հա շուե գիր | Եր կիւ ղած |
| Վար ժա րան | Բազ մա վէպ | Անձ նու րաց |
| Ճե մա րան | Օ րա գիր | Գը թու թիւն |
| Գը րա գէտ | Լը րա գիր | Հե զու թիւն |
| Գիտ նա կան | Թըղ թա տար | Գո վե լի |
| Ժը րա ջան | Բազ մա մարդ | Սի րե լի |
| Յա ջո ղակ | Բը նա կան | Յան կա լի |
| Ման կա վարժ | Ոս կե հանք | Խըղ ճա հար |
| Քե րա կան | Փայ տե ղէն | Մեղ սա կից |
| Հե գա րան | Քա րա կոփ | Գոր ծու նեայ |
| Պա տու հան | Հան քա գործ | Բա րե կիրթ |
| Գոր ծա րան | Ոս կե ձոյլ | Հայ րա կան |
| Աս տի ճան | Շո գե կառք | Մայ րա կան |
| Ան կո ղին | Մե քե նայ | Որ դե սէր |
| Դըռ նա պան | Ճա խա րակ | Սի րա լիր |



## ՔԱՌԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

| | |
|---|---|
| Գը րա վա ճառ | Կեն ցա ղա գետ |
| Ու սում նա սէր | Հը րա շա գործ |
| Դըպ րո ցա կան | Մե ղան չա կան |
| Թըղ թա վա ճառ | Վա տա բաղ դիկ |
| Ու սում նա կան | Անդ րան կու թիւն |
| Պա տե րազ մող | Ան մե ղու թիւն |
| Եր կա թա գործ | Աստ ուա ծա պաշտ |
| Ոս կեր չու թիւն | Բա րե պաշ տօն |
| Ա տաղ ձա գործ | Քաղց րա նու ագ |
| Քա ղա քա գէտ | Քը նա րա հար |
| Զին ուո րա կան | Շը նոր հա լի |
| Մե նա մար տիկ | Քաղց րա բա րոյ |
| Նա ւա տոր միղ | Հե զա հո գի |
| Հա զա րա պետ | Ե կե ղե ցի |
| Մը սա վա ճառ | Ժո ղո վա րան |
| Ճա նա պար հորդ | Սաղ մո սա րան |
| Կա ռա վա րիչ | Ե պիս կո պոս |
| Վե րա տե սուչ | Սար կա ւա գունք |
| Հե ծե լա զօր | Պաշ տօ նա տարք |
| Եր կա թու ղի | Խոր հըր դա ւոր |

## ԱՅԲՈՒԲԵՆԻ ՎՐԱՅ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻՆ ԽՕՍՔԵՐ:

Ամէն օր Տէրոջը վախին մէջ եղիր: Առակ. ԻԳ. 17:

Բոլոր սրտով Տէրոջը ապաւինէ: Առակ. Գ. 5:

Գործքի մէջ խելացութեամբ վարուողը բարիք կը գտնէ: Առակ. ԺԶ. 20:

Դուն քու աչքիդ առջեւ իմաստուն մի՛ ըլլար: Առակ. Գ. 7:

Երանի այն մարդուն որ իմաստութիւն կը գտնէ: Առակ. Գ. 13:

Զիս պիտի փնտռէք, եւ պիտի գտնէք: Երեմ. ԻԹ. 13:

Ընտրեցէք ձեզի այսօր թէ ո՛վ պիտի պաշտէք: Յես. ԻԴ. 15:

Թէ որ արդարները զօրանան, ժողովուրդը կ'ուրախանայ: Առակ. ԻԹ. 2:



Ժի՛ր եղէք, զօրացէք: Ա Կորնթ. ԺԶ. 13:

Ինչ որ առջեւնիդ դրուի, կերէք: Ղուկ. Ժ. 8.

Լռելու ժամանակ (կայ) ու խօսելու ժամանակ: Ժող. Գ. 7:

Խրատ պահողը կենաց ճամբուն մէջն է: Առակ. Ժ. 17:

Ծոյլ ձեռքով բանողը աղքատ կ'ըլլայ: Առակ. Ժ. 4:

Կռիւէն ետ կենալը մարդուն փառք է: Առակ. Ի. 3:

Համը առէք ու տեսէք որ Տէրը բարի է: Սաղմ. ԼԴ. 8:

Ձեզի նոր սիրտ պիտի տամ: Եզեկ. ԼԶ. 26:

Ճշմարտութիւն խօսողը արդարութիւն կը յայտնէ: Առակ. ԺԲ. 17:

Միացուր իմ սիրտս, որ քու անունէդ վախնայ: Սաղմ. ՁԶ. 11:

Ցիմարները յանցանքը ծաղր կ'ընեն : Առակ . ԺԴ . 9 :
Նախանձը վերարկուի պէս իր վրան առաւ : Եսայ . ԾԹ . 17 :
Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ՛ : Առակ . Ժ . 19 :
Որդեակ իմ՝ քու սիրտդ ինծի տուր : Առակ . ԻԳ . 26 :
Չէ թէ իմ կամքս՝ հապա քուկդ թող ըլլայ : Ղուկ . ԻԲ . 42 :
Պակասամիտ եղողը իր դրացին կ'արհամարհէ : Առակ . ԺԱ . 12 :
Ջա՛նք ըրէք որ նեղ դռնէն մտնէք : Ղուկ . ԺԳ . 24 :
Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է : Առակ . ԺԲ . 22 :
Վեց օրուան մէջ ըրաւ Տէրը երկինքը ու երկիրը՝ ու ծովը բոլոր անոնց մէջ եղածները : Ելից . Ի . 11 :
Տէ՛ր՝ ի՞նչ կ'ուզես որ ընեմ : Գործ . Թ . 6 :



Ցորենը պահողին՝ ժողովուրդը անէծք կու տայ : Առակ . ԺԱ . 26 :
Փափաքին կատարուիլը հոգիին անուշ է : Առակ . ԺԳ . 19 :
Քու օրէնքդ սիրողներուն շատ խաղաղութիւն կայ : Սաղմ . ՃԺԹ . 165 :
Օրէնքը պահողը իմաստուն տղայ է : Առակ . ԻԸ . 7 :

## ԹԻՒԵՐ

| ԹՈՒԱՆՇԱՆ | ԳԻՐ | ԱՆՈՒՆ |
|---|---|---|
| 1 | ա | մէկ |
| 2 | բ | երկուք |
| 3 | գ | երեք |
| 4 | դ | չորս |
| 5 | ե | հինգ |
| 6 | զ | վեց |
| 7 | է | եօթը |
| 8 | ը | ութը |
| 9 | թ | ինը |
| 10 | ժ | տասը |
| 11 | ժա | տասնումէկ |
| 12 | ժբ | տասուերկուք |

| ԹՈՒԱՆՇԱՆ | ԳԻՐ | ԱՆՈՒՆ |
|---|---|---|
| 13 | ժգ | տասուիրեք |
| 14 | ժդ | տասնուչորս |
| 15 | ժե | տասնուհինգ |
| 16 | ժզ | տասնուվեց |
| 17 | ժէ | տասնուեօթը |
| 18 | ժը | տասնուութը |
| 19 | ժթ | տասնուինը |
| 20 | ի | քսան |
| 30 | լ | երեսուն |
| 40 | խ | քառասուն |
| 50 | ծ | յիսուն |
| 60 | կ | վաթսուն |
| 70 | հ | եօթանասուն |
| 80 | ձ | ութսուն |
| 90 | ղ | իննսուն |
| 100 | ճ | հարիւր |
| 200 | մ | երկու հարիւր |
| 300 | յ | իրեք հարիւր |
| 400 | ն | չորս հարիւր |
| 500 | շ | հինգ հարիւր |
| 600 | ո | վեց հարիւր |
| 700 | չ | եօթը հարիւր |
| 800 | պ | ութը հարիւր |
| 900 | ջ | ինը հարիւր |
| 1,000 | ռ | հազար |
| 10,000 | ժռ | տասը հազար կամ բիւրա |
| 100,000 | ճռ | հարիւր հազար |
| 1,000,000 | ռռ | միլիոն |



## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ



Սուրբ Գիրքը ամէն գիրքերուն պատուականն է: Աստուած տուաւ անիկայ մարդուն՝ զանիկայ իմաստուն ու բարի ընելու համար: Երբոր մեծնաս, կարող կ'ըլլաս Աստուծոյ Սուրբ Գիրքը կարդալու: Անիկայ կ'իմացընէ քեզի թէ Աստուած ի՛նչպէս իր սիրելի Որդին խրկեց մարդիկը մեղքէ ազատելու համար: Թէ որ Աստուծոյ խօսքը կարդաս,

ու անոր սէրն զգաս, և ջանաս անոր կամքն ընելու, երբոր մեռ-նիս՝ պիտի երթաս ու երկինքին մէջ Յիսուսի հետ բնակիս: Մեղքէն հեռու կեցիր ու Աս-տուծմէ վախցիր, ու հոգիդ ա-պահով պիտի ըլլայ անոր ձեռ-քին մէջ:

## ՀՆԳԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

Աշ խար հա գրու թիւն
Բը նա բա նա կան
Երկ րա գոր ծու թիւն
Երկ րա չա փա կան
Ար ժա նա պա տիւ
Ա րև ա ծա գիկ
Արք ե պիս կո պոս
Ա ւե տա րա նիչ
Ա ւե լոր դա պաշտ
Բազ մա ցու ցա նել
Բա նաս տեղ ծա կան
Բա րե խառ նու թիւն
Եր գե հո նա հար
Ըն դար ձա կա տարր
Ե ղէգ նա խը ռիւ
Խառ նա փըն դո րել
Խա ւար տա փա ճառ
Խը նա մար կու թիւն

Խըն դա ցու ցա նել
Ծաղ կե ցու ցա նել
Ծան րա ցա սու մըն
Ծի րա նա ներ կել
Ծը նըն դա բա նել
Ծու լա մը տու թիւն
Կան խա գի տու թիւն
Կա ռա վա րու թիւն
Կա տա կեր գու թիւն
Հի ա ցու ցա նել
Հը նա զան դու թիւն
Հը նա խօ սու թիւն
Ձի ըն թա ցա րան
Ճա խա րա կա գործ
Ճա կա տա գըր եան
Մե ծա ցու ցա նել
Մեր կա պա րա նոց
Յանձ նա րա րու թիւն



## ՎԵՑԱՎԱՆԿ ԲԱՌԵՐ

Ա ւե տա րա նա կան
Ե պիս կո պո սու թիւն
Ե րէք տա սա նա մեայ
Կա նո նա պա հու թիւն
Նը սե մա ցու ցա նել
Ան ե րև ու թա նալ
Սա սա նե ցու ցա նել
Տի ե զե րա հըռ չակ
Ե ղա նա կա ւո րել
Վա րա նե ցու ցա նել
Հա ճո յա կա նու թիւն
Քի մի ա բա նա կան
Տըն տե սա կա նու թիւն
Կա տա րե լա գոր ծել
Տի ե զե րա քա րոզ
Հե րե տի կո սա պետ
Ըն դե րա բա նու թիւն
Իշ խա նա սի րու թիւն

Ժա մա նա կա գրու թիւն
Նը մա նա բու ժու թիւն
Ան հա ւա տար մու թիւն
Ա տե նա բա նա կան
Ան դա մա զըն նու թիւն
Ան ա պա կա նու թիւն
Ա տե նա խօ սու թիւն
Հա կա ռա կոր դու թիւն
Նա ւա գը նա ցու թիւն
Աս տե ղա բաշ խա կան
Մե քե նա կա նու թիւն
Ժա մա վա ճա ռու թիւն
Դըժ ուա րի մա ցու թիւն
Քա ղա քա վա րու թիւն
Սան դա րա մե տա պետ
Մա տա կա րա րու թիւն
Անդ րա դար ձու ցա նել
Նա խան ձա ւո րու թիւն

## ԿԷՏԵՐ

Բութ (՝)
Ստորակէտ (,)
Միջակէտ (.)
Վերջակէտ (:)
Շեշտ (՛)
Մակակէտ (՚)
Պարոյկ (՞)
Երկար (՜)
Պատիւ (-)
Ընթամնայ (‿)



## ՏԱՍՆԱԲԱՆԵԱՑ ՕՐԷՆՔ ՏԱՂԱՉԱՓԵԱԼ

1 · Ինծմէ զատ ուրիշ Աստուած չունենաս ·
2 · Կուռք առջև ալ ծնկան վրայ չգաս :
3 · Տէրոջն անունը պարապ գործ չածես ·
4 · Ոչ ալ հանգստեան սուրբ օրը պղծես ·
5 · Քու հօրդ ու մօրդ պատիւ տալն յիշէ ·
6 · Սպանութենէ փախիր եւ քաշուէ :
7 · Զգուէ՛ ամէն պիղծ խօսքէ ու գործքէ ·
8 · Նոյնպէս հեռացի՛ր միշտ գողութենէ :
9 · Սուտ կամ անիրաւ վկայ մի՛ ըլլար ·
10 · Երբեք ընկերիդ բանին մի՛ ցանկար :

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բոլոր սրտանց զԱստուած սիրես ,
Քու ընկերդ ալ քու անձիդ պէս :







Աստուած ըստեղծեց երկինքը երկիրն ու ծովը , և անոնց մէջն եղած բոլոր բաները վեց օրուան մէջ · և բոլոր ստեղծած բաները բարի էին :

Արեգակը ցերեկուան լոյս տալու համար ստեղծեց · և լուսինն ու աստղերը գիշերին :

Անիկայ ստեղծեց մարդն ու դաշտին անասունները, երկինքին թռչուններն ու ծովին ձուկերը :

Աստուած կ՚օրհնէ զանոնք որ իր կամքը կ՚ընեն : Երբոր առտուանց կ՚ելլես, և երբոր երեկոյին անկողին կը մտնես, գոհութիւն տուր անոր :

Աստուած պիտի կորսընցընէ չարերը, բայց պիտի ներէ անոնց՝ որ կ՚ապաշխարեն ու մեղքը կը թողուն :

### ԱՐԵԳԱԿ

Երբոր արեգակը իր ոսկեղէն գլուխը բլուրներուն վրայէն կը բարձրացընէ, երկինքն ու երկիրը կը զուարթանան : Անիկայ իր ուրախալից ճամբան կը շարունակէ, մինչև որ կէսօրին՝ երկինքին մէջտեղը կը բարձրանայ, և երկրիս վրայ լոյս ու ջերմութիւն կ՚արձակէ : Ապա դէպ 'ի արևմուտք կ՚իջնայ, ու պայծառ ամպերուն մէջ կը մտնէ :



Արեգակը կորսընցուցի՞ր կը կարծես : Ո՛չ · նորէն պիտի ծագի անիկայ հետևեալ օրը, ու թագաւորի մը պէս պիտի շարժի պայծառ կապոյտ երկինքին մէջ :

Ինչպէս որ արեգակը կը ծածկուի մեր տեսութենէն, անանկ ալ քիչ ատենէն մենք ամենքս գերեզմանը պիտի իջնանք, ու ալ աս աշխարհիս բաները պիտի չտեսնենք : Բայց ան որ մեր Տէրը կը սիրէ, պիտի չկորսուի · վաղուան արեգակէն աւելի պայծառ պիտի ելլէ գերեզմանէն, և Աստուծոյ աջ կողմը պիտի ծագի յաւիտեանս :

Ինչպէս որ արեգակին լոյսը քիչ մը ատեն կը մնայ մարը մտնելէն ետքը, անանկ ալ երբոր քրիստոնեան կը մեռնի, իր բարի գործքերուն յիշատակը իր ետին

կը ձգէ ։ Անիկայ մինչև անգամ իր երթալէն ետքը լոյս կու տայ անոնց, որոնք որ Սիօն երթալու ճամբան կը փընտռեն ։

“Ան ատեն արդարները արեւին պէս պիտի ծագին իրենց Հօրը թագաւորութեանը մէջը ։”

### ԼՈՒՍԻՆ

Լուսինն իր մէջը լոյս չունի, հապա խաւար է, և իր լոյսը արեգակէն կ՚առնէ ։

Իր գունտին կէսը միշտ կը լուսաւորի անոր ճառագայթներովը, թէ և մենք չենք տեսներ անիկայ ։ Մենք անանկ տեղ մըն ենք, որ լուսինը մէյմը լեցուն կ՚երևնայ մեզի, և ապա կը սկսի կամաց կամաց պզտիկնալ, մինչև որ բարակ եղջիւր մը կ՚ըլլայ, և ապա ժամանակ մը բոլորը կը



ծածկուի մեր աչքէն ։ Բայց անիկայ խաւար չէ, այլ դեռ կը փայլի լուսով ։

Քրիստոնեան ալ ինքնին խաւար է․ ինքիրմէն լոյս չունի․ միայն իր Տէրոջմէն առած լոյսը կը ցոլացընէ ։ Աստուծոյ շնորհքը կը ծագի անոր վրայ, և անիկայ լուսաւոր է, և լոյս կու տայ ամենուն ։

Քրիստոս է անոր լոյսը․ անոր վրայ հաւատքով կը նայի, և անոր պէս կ՚աճի հոգիով ։ Թերևս մենք անանկ վիճակի մը մէջ ենք որ միշտ չենք տեսներ քրիստոնէին լոյսը․ բայց մի՛ սեպեր թէ անիկայ խաւար է․ դուն չես գիտեր թէ ի՛նչ լոյս կը ծագի անոր հոգւոյն մէջ — ի՛նչ հաւատք՝ ի՛նչ սէր՝ և ի՛նչ յոյս կը գործէ հոն ։ Թէ որ Յիսուս Քրիստոսի հաւատանք, անի-

կայ մեզի իմաստութիւն՝ լոյս՝ և սէր պիտի ըլլայ :

"Ո՞վ է ձեր մէջը՝ որ խաւարի մէջ կը քալէ, ու լոյս չունի : Թող Տէրոջը անունին ապաւինի, և իր Աստուծոյ վրայ հաստատ կենայ :"

## ԱՍՏՂԱԼԻՑ ԵՐԿԻՆՔԸ

Մէկ պայծառ գիշեր մը աչքերդ վեր վերցուր և նայէ թէ երկինքը ի՛նչպէս լեցուն է աստղերով :

Այնքան բազմաթիւ և այնքան պայծառ են Աստուծոյ ժողովուրդը, և անանկ պիտի երևնան սիրոյ երկինքին մէջ Աստուծոյ աջ կողմը :

Դուն չես կրնար համրել աստղերը . անթիւ բազմութիւն մը կախուած կը կենան խորին և մութ միջոցին մէջ, ուր որ մեր աչքը չհասնիր :



Անանկ ալ չես կրնար համրել Աստուծոյ ժողովուրդը : Անթիւ բազմութիւն մը կայ հիմա Գառին աթոռին առջևը շատ ազգերէ ժողովուած, որ գիշեր ցորեկ կը գովաբանեն զանիկայ :

Գիտե՞ս որ աշխարհիս քանի մը կողմերը կան, ուր որ մարդոց միտքը այնքան խաւար է, որ արևը՝ լուսինը՝ և աստղերը կը պաշտեն ու անոնց աստուած կ'ըսեն : Անոնք չեն գիտեր այն մեծ Աստուածը որ ստեղծեց զանոնք :

Երբոր դէպ 'ի վեր աստղերուն վրայ կը նայիս, աս ժողովուրդներուն կուրութեանը վրայ գթա, և շնորհակալութիւն տուր Աստուծոյ որ դուն կենաց ճամբան սորվեր ես :

"Անիկայ աստղերը իրենց համրանքովը կը գրուցէ . և զա-

նոնք իրենք անուններովը կը կանչէ :"

"Գովաբանեցէք անիկայ արև և լուսին . գովաբանեցէք անիկայ դուք բոլոր լուսաւոր աստղեր :"

## ԾԻՐԱՆԻ ԳՕՏԻ

Նայէ՛ . ահա մէկ անձրևալից ամպ մը կախուեր կեցեր է երկինքին մէջ, և արևը երկինքին միւս կողմէն անոր վրայ է ծագեր . և հիմա մէկ բարձր գոյնըզգոյն աղեղ մը կ'երևնայ մեր աչքերուն :

Այն ամպը անձրևի կաթիլներէ բաղկացած է, և արևին ճառագայթները անոնց վրայ զարնելով ու անկէ ետ մեր աչքերուն գալով ամպին վրայ ձևացած աղեղի մը պէս կ'երևնան :

Ծիրանի գօտիին վրայ նայէ



և անոր ստեղծողը գովէ : Ամենաբարձրելոյն ձեռքերը ծռեցին անիկայ . և հոն կը կենայ անիկայ հաւատարիմ վկայ մը ըլլալու Աստուծոյ ճշմարտութեանը :

"Ահա ես իմ աղեղս ամպին մէջ կը դնեմ, և անիկայ մէկ նշան մը պիտի ըլլայ իմ մէջս ու երկրին մէջը : Եւ պիտի ըլլայ որ, երբոր երկրին վրայ ամպ մը բերեմ, աղեղն ալ պիտի երևնայ ամպին մէջ :"

"Եւ աթոռին չորս կողմը մէկ ծիածան մը կար զմրուխտի նըման :"

Մի՛ մօտենար, համը մի՛ առներ, մի՛ դպչեր :

| | | |
|---|---|---|
| Օձի | Գինի | Ծխախոտ |
| Ցքի | Ափիոն | Քթախոտ |

### ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՆԱՑԸ

## ՄԷԿ ՔԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ



ՓՐԿՉԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Յիսուս Քրիստոս ժամանակ մը քեզի պէս տղայ մըն էր : Անիկայ տղայ եղաւ՝ որ գիտնայ թէ ի՛նչպէս կարեկից ըլլալու և գթալու է տղու մը, և որ փոքր տղոց ցուցունէ թէ ի՛նչպէս գործելու են անոնք :

Անիկայ իր Մարիամ մօրը հետ արջառներու քով մսուրի մը մէջ պառկեցաւ, վասն զի իջևանին



մէջ իրենց համար տեղ չկար : Անիկայ աղքատ տղայ մըն էր, և սակայն Աստուծոյ Որդին էր :

Եւ Աստուած մէկ սուրբ հրեշտակ մը խրկեց որ երթայ և զրուցէ ան մարդոցը՝ որոնք դաշտին մէջը ոչխարներու պահպանութիւն կ՚ընէին, թէ Աստուծոյ Որդին ծնաւ երկրիս վրայ :

Ատենը գիշեր էր, բայց փառքը ծագեց անոնց չորս դին, և ցորեկուան պէս լոյս եղաւ :

Անոնք ալ վախցան, բայց հրեշտակը ըսաւ, Մի՛ վախնաք, ձեզի մեծ ուրախութեան աւետիս բերի. Դաւիթի քաղաքին մէջ տղայ մը ծնաւ, որ մարդիկը իրենց մեղքերէն պիտի ազատէ : Ո՜հ, ի՛նչ աւետիս մըն է ասիկայ ան ամենուն որ իրենց մեղ-

քերուն վրայ կը զզջան , և Աստուծոյ բարկութենէն կը վախնան :

Անատենը հրեշտակը սկսեց Աստուծոյ գոհաբանութիւն երգել , և շատ ուրիշներ ալ , այո՛՝ անթիւ բազմութիւն մը եկաւ երկինքէն անոր հետ միացաւ , և ամէնը մէկտեղ երգեցին փառք 'ի բարձունս Աստուծոյ , և յերկիր խաղաղութիւն , 'ի մարդիկ հաճութիւն :

Ի՞նչ քաղցր և ուրախալից երգ մըն էր անիկայ : Ասոր նման երաժշտութիւն մը լսուեցա՞ւ երբեք երկրիս վրայ : Կը յուսա՞ս որ մէկ օր մը Աստուծոյ գովաբանութեան երգը երգես հրեշտակաց ու սուրբերուն հետ երկինքին մէջ : Ուրեմն պէտք է որ մեղքը ձգես , զԱստուած սիրես , և անոր օրէնքին հնազանդիս :



Ան մարդիկը՝ որոնք լսեցին աս երգը հրեշտակներէն , հօտերնին դաշտին մէջ ձգեցին ու մսուրը գացին մանուկը տեսնելու և անոր երկիրպագութիւն ընելու :

Մոգեր ալ եկան հեռու երկրէ զանիկայ տեսնելու . և Աստուած մէկ պայծառ աստղ մը խրկեց անոնց առջեւէն զանոնք ան տեղը տանելու : Եւ ահա՛ ան աստղը՝ որ անոնք տեսան արեւելքը , եկաւ և կայնեցաւ ան տեղին վըրայ ուր որ մանուկը էր , և մոգերը շատ ուրախացան . և երբոր տուն մտան , երկիրպագութիւն ըրին մանուկին , և զանիկայ իրենց Տէրն ու Փրկիչը անուանեցին :

Երբոր հովիւներն ու մոգերը գացին , ան աւետիսը որու որ հանդիպեցան զրուցեցին՝ ըսելով

թէ, Յիսուս ծնաւ մեզ փրկելու:

Եւ մանուկը կը մեծնար, և իմաստուն ու բարի էր իր բոլոր խօսքերուն ու գործքերուն մէջ: Ամէն բանի մէջ Աստուծոյ կամքը կը կատարէր որ զինքը խրկեց, և Աստուծոյ ու մարդոց սիրելի էր:

Թէ որ կ'ուզէք Յիսուսի նման ըլլալ, ականջ դրէք անոր զրուցածին որ կ'ըսէ. Եկէք և ինծմէ սորվեցէք, ինչու որ ես հեզ և խոնարհ եմ սրտիւ, և ձեր հոգիին խաղաղութիւն պիտի գտնէք:

---

### ՔՐԻՍՏՈՍԻ ՓՈՐՁՈՒԻԼԸ

Մենք ամէնս ալ մեղքի մէջ ծնած ենք ու չարութիւն գործել կը սիրենք: Սատանան՝ ան չարը, որն որ Աստուած դուրս



ըրաւ երկինքէն, կը փորձէ մեզ որ չար բաներու փափաքինք, բարկանանք և հպարտանանք, և ստութիւն խօսինք: Աստուծոյ աղաչելու ենք որ մեզի շնորհք տայ, որ փորձութեան ատեն մեզ չարէն պահէ:

Սատանան ջանք ըրաւ և զՅիսուս փորձելու՝ որ մեղք գործէ: Ասիկայ Քրիստոսի մեծցած մարդ եղած ատենն էր, երբ ասդին անդին պիտի պտըտէր քարոզելու մարդոց թէ ինքը զանոնք փրկելու համար եկեր է: Սատանան չէր ուզեր որ Քրիստոս աս բանը ընէ, վասն զի կ'ուզէ որ մարդիկ իրենց մեղքերուն մէջ յառաջ երթան:

Յիսուս մէկ առանձին տեղ մը գնաց աղօթք ընելու և ան գործքին վրայ մտմտալու, որուն համար որ խրկուած էր. այս-

ինքն ան մեծ գործքին վրայ, որ մարդոց հոգիները փրկել և զանոնք փառքի բերել էր։ Այնքան կեցաւ աս աղօթքին մէջ, որ՝ շատ անօթեցաւ։

Ան ատենը Սատանան եկաւ անոր ու ըսաւ, թէ որ Աստուծոյ Որդին ես ու ամէն իշխանութիւն ունիս, ինչո՞ւ համար հրաման չես ըներ քարին որ հաց ըլլայ, որ ուտելիք ունենաս։

Յիսուս կրնար ընել աս բանը թէ որ ուզէր, բայց գիտեր որ Աստուծոյ կամքը չէր աս բանը ու չէր ուզէր ընել անիկայ։ Անոր համար ըսաւ Սատանային թէ Աստուածաշունչը կ՚ըսէ որ չէ թէ միայն հացով պիտի ապրիս, այլ Աստուծոյ խօսքովն ալ։

Անատենը Սատանան ջանաց Յիսուսը նորէն փորձելու։ Անոր հետ ելաւ լեռան մը գլուխը գը-



նաց, և աշխարհիս մէջ եղած բոլոր մեծ ու գեղեցիկ բաները անոր առջևէն անցուց ու ըսաւ, աս ամէնը քեզի կու տամ, թէ որ միայն իյնաս ու երկրպագութիւն ընես ինծի։ Սատանան գիտէր որ Յիսուս ոչ տուն ունէր՝ ոչ երկիր՝ և ոչ ստակ, անոր համար աս առաջարկութիւնը ըրաւ անոր որ փորձէ զանիկայ։

Բայց Յիսուս ըսաւ. Աստուծոյ օրէնքը կ՚ըսէ թէ՝ Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն ընես, միայն անիկայ պաշտես։

Անատենը Սատանան ջանաց երրորդ անգամ Յիսուսը փորձելու։ Եւ որովհետև Յիսուս Աստուածաշունչին մէջէն խօսեցաւ անոր, ան ալ Սուրբ Գիրքէն մէկ տուն մը մէջ բերաւ։ Տաճարին կամ Աստուծոյ տանը

տանիքին վրայ կայնեցան, որն որ շատ բարձր էր, և Սատանան ըսաւ Յիսուսին, Թէ որ դուն ճշմարտապէս Աստուծոյ Որդին ես, կրնաս անկէց վար իյնալ աս տեղէն ու չվնասուիլ. ինչու որ Աստուածաշունչը կ'ըսէ Թէ՝ Աստուած հրաման պիտի ընէ իր հրեշտակներուն որ քեզի հոգ տանին, և անոնք քեզ ձեռքի վրայ պիտի բռնեն որ ոտքդ քարի չզարնես :

Բայց Յիսուս ըսաւ, Ետև գնա՛ Սա՛տանայ. ինչու որ սուրբ Խօսքը կ'ըսէ. քու Տէր Աստուածդ չփորձես :

Եկէք Յիսուսէն սորվինք Աստուծոյ հնազանդելու, և Սատանային ականջ չկախենք՝ երբոր կը ջանայ մեզի չարութիւն ընել տալու : Թէ որ Յիսուս մէկ գէշ բան մը ըրած ըլլար, մար-



դոց փրկիչը չէր կրնար ըլլալ : Բայց անիկայ անբիծ էր, և մեղաց արատ չունէր իր վրան : Այսպէս անիկայ յարմար էր իր կեանքը տալու մարդոց մեղքերուն համար :

---

## ՔՐԻՍՏՈՍԻՆ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Յիսուս մէկ տեղ մը աղօթքի տուն մը գնաց, և երբոր բոլոր ժողովուրդը անոր կը նայէր, Աստուածաշունչը առաւ և մէջէն մէկ տեղ մը կարդաց՝ ուր որ Աստուած կ'ըսէ Թէ իմ Որդիս աշխարհ պիտի խրկեմ աղքատներուն քարոզելու՝ հիւանդները բժշկելու՝ կոյրերուն տեսութիւն տալու՝ և ուրախութիւն անոնց որ կոտրած են սրտիւ :

Եւ երբոր Յիսուս կարդաց ասիկայ՝ գոցեց գիրքը և ըսաւ,

Այսօր աս բանը եղաւ , և դուք կը տեսնէք ու կը լսէք ասիկայ : Եւ քանի որ անիկայ ասանկ քաղցր խօսքեր կը խօսէր , ժողովուրդը աչքը անկէր անոր վըրայ կը նայէր :

Երանի անոնց որ կրնային ան քաղցր երեսին վրայ նայիլ և ան սիրոյ խօսքերը լսել՝ որոնք անոր շրթունքներէն կը բղխէին : Երանի մեզի ալ , որ Աստուածաշունչ ունինք , և կրնանք կենաց խօսքերը կարդալ : Եւ գիտենք որ Յիսուս մեզ կը տեսնէ ու կը լսէ մեզի , և ան ամէն բանը կ՚ընէ մեզի համար հիմա , ինչ որ ըրաւ երկրիս վրայ զինքը տեսնողներուն համար :

Թէ որ միայն խօսք մը զրուցէր , անիկայ շուտով կը կատարուէր : Շատերը որ հիւանդ ու թշուառութեան մէջ էին , անոր



գացին և անկէ բժշկութիւն ու օգնութիւն խնդրեցին , և ան ըրաւ :

Յիսուսը սիրողներէն և անոր ետևէն գացողներէն մէկը Պետրոսն էր : Պետրոսին տանը մէջ իր զոքանչը ջերմէն պառկած էր : Յիսուս եկաւ և անոր քովը կայնեցաւ , և հրաման ըրաւ ջերմին որ ելլէ . և հիւանդը ելաւ ու ըրնաւ չհիւանդացած մէկու մը պէս կը պտըտէր :



Ասանկ շատ բաներ ըրաւ Յիսուս : Ոմանք որ կոյր էին , եկան ու աղաչեցին իրեն որ իրենց աչքերը բանայ : Եւ անիկայ տեսնել տուաւ անոնց՝ որ առաջ բնաւ տեսած չէին :

Որքա՜ն ուրախ եղած ըլլալու են լոյսը՝ երկինքը՝ խոտը՝ ծառերը՝ և իրենց սիրականներուն երեսները տեսնելնուն համար :

Երբոր կոյրերը աղաղակեցին Յիսուսի՝ որ իրենց օգնէ, անիկայ ըսաւ անոնց որ եթէ իրեն կը հաւատան, ինքն ալ անոնց տեսնել կու տայ :

Ի՞նչ է Քրիստոսի հաւատալը: Վստահ ըլլալ է թէ ան կրնայ և կ՚ուզէ ընել ինչպէս որ ինքն ըսաւ, և թէ կարող է բոլոր մեր խնդրած բաները պարգևելու :

Մեր հոգիները կարօտ են որ մեղքէ սրբուին, և մաքուր ու սուրբ ըլլան : Յիսուսէն ՚ի զատ մէկը չկրնար ընել մեզի աս բանը : Անիկայ իր արիւնը թափեց մեզի համար, և թէ որ մենք ալ անոր հաւատանք, բոլոր կարօտ եղած բաներնիս մեզի պիտի տայ,



ինչու որ անիկայ լեցուն է գթութեամբ, և անոր զօրութիւնը իր ողորմութեանը չափ մեծ է :

---

## ՈՐԲԵՒԱՅՐԻԻՆ ՈՐԴԻԻՆ ՅԱՐՈՒՑԱՆԵԼԸ



Անգամ մը Յիսուս մէկ բազմութեան մը հանդիպեցաւ որ քաղաքէ մը դուրս կ՚ելլէին ու-

բռնք մէկ տղու մը մեռելը կը տանէին: Կ'երթային որ անիկայ հողին մէջ թաղեն: Տղուն մայրը անոնց հետ մէկտեղ կու գար շատ տրտմած, ինչու որ անիկայ իրեն մէկ հատիկ զաւակն էր: Եւ Յիսուս երբոր տեսաւ անիկայ, գթացաւ անոր վրայ և ըսաւ. Մի՛ լար: Ետեւենք մեռելին մօտեցաւ ու ըսաւ. Ո՛վ պատանի, քեզի կ'ըսեմ, ելի՛ր: Եւ ան որ մեռած էր, ելաւ նստաւ և սկսեց խօսիլ, և Յիսուս անիկայ իր մօրը տուաւ, և անիկայ անոր հետ տուն գնաց:

Մեծ ուրախութեամբ չլեցուեցա՞ւ ան մօրը սիրտը: Շատ անգամ չխօսեցա՞ւ իր տղուն հետ անոր վրայով՝ որ ատանկ բան ըրաւ իրենց:

Երբոր Յիսուս վերջին օրը մեռելներուն ելէ՛ք ըսէ, իցէ՛ թէ



մենք ալ անոր ձայնը ուրախութեամբ լսենք: Ո՛հ, որքան երանելի են անոնք՝ որ ամպերուն մէջ պիտի դիմաւորեն անիկայ, ու անոր հետ երկինքը երթան:

---

### ՔՐԻՍՏՈՍԻ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅԷՆ ՔԱԼԵԼԸ

Քրիստոս սիրողներէն ոմանք նաւակով մը ծովուն վրայէն կ'երթային ձուկ բռնելու: Անգամ մը երբոր Յիսուս անոնց հետ չէր, բոլոր գիշերը աշխատեցան ու ձուկ մը չկրցան բռնել: Բայց Յիսուս ցուցուց անոնց թէ ուր ձգելու է ուռկանը, և անատենը ձուկով լեցուն վեր քաշեցին անիկայ: Ծովուն մէջն եղած բոլոր ձուկերը անորն են, և ան գիտէ թէ ուր են անոնք:

Անգամ մը աս մարդիկը նաւի

մը մէջ էին, և Յիսուս անոնց հետը չէր, ու հովն ալ շատ սաստիկ կը փչէր: Անոնք ալ կը վախնային որ նաւը պիտի խորտակի, և իրենք ալ պիտի կորսուին:

Յետոյ մէկը տեսան որ ջուրին վրայէն դէպ 'ի իրենց կու գար: Աս բանը տեսնել վախցուց զանոնք. վասն զի տարօրինակ բան մըն էր որ մէկը ջուրին վրայէն քալէ ու չընկղմի:

Բայց ան որ ջուրին վրայ էր՝ խօսեցաւ ու ըսաւ. Քաջ եղէ՛ք, ես եմ, մի՛ վախնաք: Ան ատենը ճանչցան Յիսուսի ձայնը, և շատ ուրախացան որ իրենց քովը կու գայ նաւին մէջ: Եւ հովը այլ ևս չփչեց, և նաւը շուտով ցամաքն հասաւ:

Մէկ ուրիշ անգամ մըն ալ երբոր մեծ փոթորիկ մը կար, Յի-



սուս նաւին մէջ կը քնանար. և անոնք եկան զինքը արթընցընելու, ինչու որ գիտէին անոր զօրութիւնը, և վստահ էին որ կրնայ իրենց օգնել:

Այսպէս ըսին անոր. Տէ՛ր, փրկէ մեզ, եթէ ոչ՝ պիտի ընկըղմինք ու մեռնինք: Եւ Յիսուս ելաւ ու ըսաւ. Ինչո՞ւ կը վախնաք: Ինչո՞ւ թերահաւատ էք: Ապա՝ հրաման ըրաւ հովին որ դադարի, և ալիքներուն որ հանդարտին. և մէյ մըն ալ յանկարծակի ամէն բան խաղաղեցաւ: Եւ անոնք որ տեսան աս բանը, ըսին. Ո՞վ կրնայ ըլլալ աս, որուն հովերն ու ծովը կը հնազանդին:

Յիսուս որ կրնայ հանդարտեցընել ալիքները, կրնայ խաղաղութիւն տալ մեր մտացը: Կրնայ հեռի պահել մեզ նախան-

ձուլթենէ՝ բարկութենէ՝ և վախէ, և ան ամէն բաներէն՝ որ մեր ուրախութիւնը ու խաղաղութիւնը կ'աւրեն ։ Երբոր նեղութեան մէջ ենք, կրնայ մեր հոգւոյն քաղցր խօսք մը խօսիլ, ու մեզ խաղաղեցընել ։ Որքան սիրելի բան է Յիսուսի մօտ ապրիլը ։ Թող ան ժամանակը շուտով գայ, երբոր բոլոր աշխարհ պիտի ճանչնան ու սիրեն անիկայ ։

---

### ԿԱՌԱՎԱՐԻՉԻՆ ԱՂՋԻԿԸ

Անգամ մը մէկ մարդ մը եկաւ Յիսուսին մեծ տրտմութեան մէջ ։ Անիկայ կառավարիչ մըն էր ժողովուրդին մէջ, բայց հարըստութիւնն ու պատիւը մարդս նեղութենէ՝ ցաւէ՝ և մահուանէ չեն կրնար պահել ։ Երբոր տեսաւ Յիսուսը, անոր ոտքը ինկաւ ու ըսաւ . Իմ փոքրիկ աղջիկս չարաչար հիւանդ է . կը վախնամ թէ պիտի մեռնի ։ Կ'աղաչեմ քեզի, եկուր, և քու ձեռքդ անոր վրայ դիր, որ ապրի ։



Նոյն րոպէին մէկ ուրիշը եկաւ տունէն և ըսաւ թէ մեռաւ . պէտք չէ որ ըսես անոր որ գայ . օգուտ չըներ գալը ։ Անոնք չէին հաւատար թէ Յիսուս իշխանութիւն ունի միանգամ մեռեալները նորէն յարուցանելու ։ Բայց Յիսուս ըսաւ անոր հօրը . Մի՛ վախնար, միայն հաւատա՛ ։

Ու ելաւ անոր հետ տուն գընաց, և երբոր ան տեղը մտաւ ուր որ աղջիկը մեռած պառկած էր, անոր ձեռքէն բռնեց ու Ելի՛ր ըսաւ ։ Ու անիկայ ելաւ ու կը պտըտէր, որպէս թէ ամե-

նախն մեռած կամ հիւանդացած չէր ։

Որքան բարերար է Յիսուս մանկանց՝ որ զինքը կը սիրեն ։

Ինչ որ ճշմարտութիւնով է,
Ինչ որ պարկեշտութիւնով է,
Ինչ որ արդարութիւնով է,
Ինչ որ մաքրութիւնով է,
Ինչ որ սիրով է,
Ան բաները խորհեցէք ։

Փիլպ. դ. 8.

### ՄԱՆՐ ՏՂԱՑ ՀԱՄԱՐ

## ԳԻՐՔԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Ո՞վ էր առաջին մարդը ։
Պ. Ադամ ։
Հ. Ո՞վ էր առաջին կինը ։
Պ. Եւայ ։
Հ. Ո՞վ էր առաջին մարդասպանը ։
Պ. Կայէն ։



Հ. Ո՞վ էր առաջին մարտիրոսը ։
Պ. Աբէլ ։
Հ. Ո՞վ էր ամենէն շատ ապրող մարդը ։
Պ. Մաթուսաղայ ։
Հ. Ո՞վ շինեց տապանը ։
Պ. Նոյ ։
Հ. Ո՞վ էր ամենէն հաւատարիմ մարդը ։
Պ. Աբրահամ ։
Հ. Ո՞վ էր ամենահեզ մարդը ։
Պ. Մովսէս ։
Հ. Ո՞վ էր ամենէն համբերող մարդը ։
Պ. Յոբ ։
Հ. Ո՞վ ըմբշամարտեցաւ Աստուծոյ հրեշտակին հետ ։
Պ. Յակոբ ։
Հ. Ո՞վ տարաւ Իսրայէլացիք Քանանու երկիրը ։
Պ. Յեսու ։
Հ. Ո՞վ էր ամենէն ուժով մարդը ։
Պ. Սամփսոն ։
Հ. Ո՞վ սպաննեց Գողիաթը ։
Պ. Դաւիթ ։

Հ. Ո՞վ էր ամենէն իմաստուն թագաւորը :
Պ. Սողոմոն :
Հ. Ո՞վ ձգուեցաւ առիւծոց գուբը :
Պ. Դանիէլ :
Հ. Ո՞վ մեռաւ մարդիկները փրկելու :
Պ. Յիսուս Քրիստոս :
Հ. Ո՞վ է Յիսուս Քրիստոս :
Պ. Աստուծոյ Որդին :
Հ. Ո՞վ էր Քրիստոսի մայրը :
Պ. Մարիամ :
Հ. Ո՞վ էր ամենասիրելի աշակերտը :
Պ. Յովհաննէս :
Հ. Ո՞վ մատնեց մեր Տէր Փրկիչը :
Պ. Յուդա :
Հ. Ո՞վ ուրացաւ մեր Տէրը :
Պ. Պետրոս :
Հ. Ո՞վ 'ի մահ մատնեցաւ սուտ մը խօսելուն համար :
Պ. Անանիա և Սափիրա :
Հ. Ո՞վ էր առաջին քրիստոնեայ նահատակը :
Պ. Ստեփաննոս :



Հ. Ո՞վ էր հեթանոսներուն գլխաւոր առաքեալը :
Պ. Պօղոս :

---

# ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Հ. Կրնա՞ս ըսել, տղա՛ս, ո՞վ ստեղծեց քեզ :

Պ. Այն մեծ Աստուածը, որ երկինքն ու երկիրը ըրաւ :

Հ. Աստուած ի՞նչ կ'ընէ քեզի համար :

Պ. Գիշեր և ցորեկ զիս չարիքէ կը պահէ, և միշտ ինծի բարիք կ'ընէ :

Հ. Իսկ դո՞ւն ինչ ընելու ես այն մեծ Աստուծոյն, որ քեզի այսչափ բարիք կ'ընէ :

Պ. Նախ և առաջ պէտք է սորվիմ անիկայ ճանչնալ, և ապա ամէն բան ընել անոր հաճելի ըլլալու :

Հ. Ո՞ւր կը սորվեցունէ Աստուած մեզի զինքը ճանչնալու ու սիրել :

Պ. Իր սուրբ Խօսքին մէջ, որ Աստուածաշունչին մէջ գրուած է :

Հ. Գիտե՞ս թէ Աստուած ինչ է :

Պ. Աստուած Հոգի է, և թէպէտ մենք չենք կրնար տեսնել զանիկայ, բայց ան կը տեսնայ ու գիտէ ամէն բան, և կրնայ ամէն բան ընել :

Հ. Ի՞նչ ընելու ես Աստուծոյ հաճելի ըլլալու համար :

Պ. Ես առ Աստուած և առ մարդիկ ունեցած պարտաւորութիւններս կատարելու եմ :

Հ. Ի՞նչ են քու առ Աստուած ունեցած պարտաւորութիւններդ :

Պ. Առ Աստուած ունեցած պարտաւորութիւնս է վախնալ անկէ և պատուել զանիկայ, և սիրել և ծառայել անոր, աղօթք



ընել անոր և գովաբանել զինքը :

Հ. Ի՞նչ են առ մարդ ունեցած պարտաւորութիւններդ :

Պ. Առ մարդ ունեցած պարտաւորութիւնս է ծնողացս հնազանդիլ. միշտ ճշմարիտ խօսիլ և պարկեշտ ու ամենուն բարերար ըլլալ :

Հ. Ի՞նչ բարիք կը յուսաս Աստուծոյ հաճելի ըլլալէդ :

Պ. Անատենը Աստուծոյ զաւակը պիտի ըլլամ, և Աստուած ալ իմ Հայրս ու իմ բարեկամս պիտի ըլլայ յաւիտեան :

Հ. Իսկ ի՞նչ կը յուսաս թէ որ Աստուծմէ չվախնաս, ոչ ալ անիկայ սիրես և ոչ ալ անոր հաճելի ըլլալ փնտռես :

Պ. Անատենը չար որդի մը պիտի ըլլամ, և բարձրեալ Աստուածը յոյժ պիտի բարկանայ ինծի :

Հ. Ինչո՞ւ համար կը փախնաս Աստուծոյ ներկայութենէն :

Պ. Ինչու որ մարմինս կրնայ մեռցունել, և հոգիս ալ թշուառ ընել :

Հ. Բայց արդէն մէկ բան մը ըրած չէ՞ս բնաւ զԱստուած բարկացնելու :

Պ. Այո՛, կը փախնամ յոյժ, շատ անգամ մեղանչեր եմ Աստուծոյ դէմ, և արժանի եղեր եմ անոր բարկութեանը :

Հ. Ի՞նչ ըսել կ'ուզես Աստուծոյ դէմ մեղանչել ըսելով :

Պ. Աստուծոյ դէմ մեղանչել ըսելով՝ ըսել կ'ուզեմ անանկ բան մը ընել՝ որ ինքը կ'արգիլէ, կամ ան բանը չընել որ ինքը կը պատուիրէ :

Հ. Իսկ ի՞նչ ընելու ես Աստուծոյ բարկութենէն ազատելու համար, որուն քու մեղքերդ քեզ արժանի ըրին :

Պ. Տրտմելու եմ մեղքերուս



համար. աղօթք ընելու եմ Աստուծոյ անցեալին համար թողութիւն տալու, և անկէ ետքը անոր լաւագոյն ծառայելու :

Հ. Աստուած կը ներէ՞ քեզի թէ որ անոր աղօթք ընես :

Պ. Կը յուսամ թէ կը ներէ թէ որ անոր ողորմութեանը ապաւինիմ, Յիսուս Քրիստոսի արժանաւորութեանը ու անոր չարչարանքներուն համար :

Հ. Գիտե՞ս ով է Յիսուս Քրիստոս :

Պ. Անիկայ Աստուծոյ բուն որդին է, որ երկինքէն վար իջաւ մեզ մեր մեղքերէն և Աստուծոյ բարկութենէն փրկելու :

Հ. Ի՞նչ ըրաւ Քրիստոս մարդիկ փրկելու համար :

Պ. Աստուծոյ օրէնքին ինքը հնազանդեցաւ, և սորվեցուց մեզի որ մենք ալ հնազանդինք :

Հ. Իսկ ի՞նչ ըրաւ Քրիստոս մարդիկ փրկելու համար :

Պ. Ինքն մեռաւ մեղաւորներուն համար, որոնք Աստուծոյ օրէնքը կոտրեր, և իրենք մեռնելու արժանի եղեր էին :

Հ. Ո՞ւր է հիմա Յիսուս Քրիստոս :

Պ. Ինքն կենդանի է դարձեալ, և երկինքը գացած է հոն տեղ պատրաստելու անոնց՝ որ Աստուծոյ կը ծառայեն և իր որդին Յիսուսը կը սիրեն :

Հ. Ինչպէ՞ս կրնա՞ս սիրել և ծառայել Աստուծոյ և Քրիստոսի :

Պ. Չէ՛. ինքիրմէս չեմ կրնար ընել, բայց Աստուած պիտի օգնէ ինծի իր սուրբ Հոգիովը, թէ որ խնդրեմ զանիկայ :

Հ. Յիսուս Քրիստոս երբե՞ք պիտի գա՞յ նորէն :

Պ. Քրիստոս պիտի գայ նորէն, և ես ու բոլոր աշխարհ



պիտի կանչէ հաշիւ պահանջելու բոլոր ըրած բաներնուս համար :

Հ. Ի՞նչ բանի համար աս հաշիւը պիտի պահանջուի :

Պ. Որ Աստուծոյ ծառաները՝ ինչպէս որ չարերն ալ, ընդունին իրենց գործքերուն համեմատ :

Հ. Ի՞նչ պիտի ըլլայ մեզ թէ որ չար գործենք :

Պ. Թէ որ մեղաւոր ըլլամ, դժոխքին յաւիտենական կրակին մէջ պիտի խրկուիմ, անբարիշտ և թշուառ արարածներուն մէջ :

Հ. Իսկ ո՞ւր պիտի երթամ, թէ որ Աստուծոյ սիրելի մէկ զաւակն ըլլամ :

Պ. Թէ որ Աստուծոյ մէկ սիրելի զաւակը ըլլամ, երկինքը պիտի երթամ, և հոն Աստուծոյ ու Քրիստոսի հետ պիտի ընակիմ յաւիտեան. Ամէն :

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

### ՈՐՈՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ ԼԵԶՈՒՈՎԸ ԳՐՈՒԱԾ Է

1 . Ո՞վ ստեղծեց քեզ :

Տէր Աստուած գետնի հողէն շինեց մարդը : Ծննդ . Բ . 7 :

2 . Ի՞նչպէս ստեղծուեցար դուն :

Ահաւոր ու զարմանալի կերպով ստեղծուեցայ : Սաղմ . ՃԼԹ . 14 :

3 . Ի՞նչ բանի համար ստեղծուեցար :

Փառաւորեցէ՛ք զԱստուած ձեր մարմիններուն ու հոգիներուն մէջ , որ Աստուծոյ են : Ա Կորնթ . Զ . 20 :

4 . Աստուած ի՞նչ է :

Աստուած Հոգի է : Յովհ . Դ . 24 :

5 . Ի՞նչ է Աստուծոյ յատկութիւնը :



Աստուած սէր է : Ա Յովհ . Դ . 8 :

6 . Արդար ու ճշմարի՞տ ալ է :

Աստուած հաւատարիմ է , ու անիրաւութիւն չունի . անիկայ արդար ու ուղիղ է : Բ Օրին . ԼԲ . 4 :

7 . Աստուած ո՞ր մարդը կը սիրէ :

Կը սիրեմ զիս սիրողները : Առակ . Ը . 17 :

8 . Աստուած ամէնքին մարդիկը կը սիրէ՞ :

Աստուած մեղաւորին ամէն օր բարկացած է : Սաղմ . Է . 11 :

9 . Քեզի պէս պզտիկ տղան ալ Աստուած յիշելո՞ւ է :

Եւ քու Ստեղծիչդ երիտասարդութեանդ օրերուն մէջ յիշէ՛ : Ժող . ԺԲ . 1 :

10 . Աստուած կրնա՞յ տեսնել քեզ :

Մէկը ծածուկ տեղուանք կրնա՞յ պահուիլ , որ ես զանիկայ

*չտեսնեմ, կ՚ըսէ Տէրը :* Երեմ. ԻԳ. 24 :

11. Աստուած ամէն տե՞ղ է, և ամէն բան կը տեսնա՞յ :

*Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերը ու բարիները կը դիտեն :* Առակ. ԺԵ. 3 :

12. Աստուած բոլոր բաները կը գիտէ՞ :

*Բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ, ահա՛ ո՛վ Տէր՝ դուն ամէնը գիտես :* Սաղմ. ՃԼԹ. 4 :

13 : Աստուած մեր ամէն խորհուրդները գիտէ՞ :

*Ես ձեր մտքէն անցածը գիտեմ :* Եզեկ. ԺԱ. 5 :

14. Աստուածաշունչը Աստուծոյ խօ՞սքն է :

*Բոլոր Գիրքը Աստուծոյ շունչն է :* Բ Տիմ. Գ. 16 :

15. Սուրբ Գիրքերը ի՞նչ կրնան ընել մեզի :



*Սուրբ գիրքերը գիտես, որոնք կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու :* Բ Տիմ. Գ. 15 :

16. Հրամայուա՞ծ է մեզի Աստուածաշունչը կարդալ :

*Գիրքերը քննեցէ՛ք :* Յովհ. Ե. 39 :

17. Աստուածաշունչը ի՞նչ ըլլալու է մեզի :

*Իմ ոտքերուս ճրագ է, ու իմ շաւիղներուս լոյս :* Սաղմ. ՃԺԹ. 105 :

18. Թէ որ Աստուծոյ խօսքը կը սիրենք, անիկայ մեզ մեղքէ պիտի պահէ՞ :

*Իմ սրտիս մէջը պահեցի քու խօսքերդ, որ չմեղանչեմ քեզի դէմ :* Սաղմ. ՃԺԹ. 11 :

19. Աստուած Աստուածաշունչին մէջ ի՞նչ կը խոստանայ մանր տղոց :

*Զիս կանուխ փնտռողները, զիս կը գտնեն :* Առակ. Ը. 17 :

20. Աստուած ի՞նչ կը խոստանայ Աս-

տուածաշունչին մէջ, նեղութեան մէջ եղող Քրիստոնէին :

Նեղութեան մէջ անոր հետ պիտի ըլլամ : Սաղմ. ՂԱ. 15 :

21. Ի՞նչ կը խոստանայ հիւանդութեան մէջ եղողին :

Տէրը անոր ուժ պիտի տայ տկարութեան անկողինին մէջը. անոր ամէն անկողինը պիտի դարձընես անոր հիւանդութեան ատենը : Սաղմ. ԽԱ. 3 :

22. Ի՞նչ կը խոստանայ Քրիստոնէին անոր մահուան մէջ :

Թէև մահուան շուքի ձորին մէջն ալ պտըտիմ, չարէն պիտի չվախնամ. վասն զի դուն իմ հետս ես. քու ցուպդ ու գաւազանդ՝ անոնք զիս պիտի մխիթարեն : Սաղմ. ԻԳ. 4 :

23. Ի՞նչ խոստմունք կ՚ընէ աղքատութեան մէջ եղողին :

Տէրը իմ հովիւս է. ես բանի



մը կարօտութիւն պիտի չունենամ : Սաղմ. ԻԳ. 1 :

24. Ի՞նչ խոստմունք կ՚ընէ որբերուն :

Որբերուն հայրը ու որբևայրիներուն դատաւորը Աստուած է իր սուրբ բնակարանին մէջ : Սաղմ. ԿԸ. 5 :

25. Ի՞նչ խոստմունք կ՚ընէ ծերերուն :

Մինչև ձեր ծերութիւնը անգամ ես նոյն եմ. ու մինչև ձեր ալևորութիւնը ես ձեզ պիտի կրեմ. ես ստեղծեցի, ու ես պիտի վերցընեմ. ես պիտի կրեմ, ու պիտի ազատեմ : Եսայ. ԽԶ. 4 :

26. Ամէն բան օգուտ կը գործէ՞ն Աստուծոյ զաւակներուն :

Ամէն բաները բարիի գործակից կ՚ըլլան անոնց՝ որ Աստուած կը սիրեն : Հռովմ. Ը. 28 :

27. Մեր հոգւոր օրհնութիւնները ուսկի՞ց կու գան :

Ամէն բարի տուրք՝ ու ամէն կատարեալ պարգև վերէն է, և լուսոյ Հօրմէն կ'իջնէ : Յակ. Ա. 17 :

28. Մեղաւո՞ր ենք մենք :

Ամէնքը մեղք գործեցին, և Աստուծոյ փառքէն պակաս են : Հռովմ. Գ. 23 :

29. Մեղքը ի՞նչպէս աշխարհք մտաւ :

Մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ : Հռովմ. Ե. 12 :

30. Մեղաւորները դժոխք պիտի երթա՞ն :

Ամբարիշտները դժոխքը պիտի դառնան : Սաղմ. Թ. 17 :

31. Հոգիդ ի՞նչպէս կրնայ փրկուիլ :

Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին, ու պիտի փրկուիս դուն : Գործ. ԺԶ. 31 :

32. Ի՞նչ բանի համար Տէր Յիսուս աշխարհք եկաւ :

Քրիստոս Յիսուս աշխարհք



եկաւ մեղաւորները փրկելու : Ա Տիմ. Ա. 15 :

32. Քրիստոս Աստուա՞ծ է :

Որ ինքն է ամենուն վրայ Աստուած օրհնեալ յաւիտեանս : Հռովմ. Թ. 5 :

34. Քրիստոս 'ի յաւիտենի՞ց է :

Անիկայ սկիզբէն Աստուծոյ քովն էր : Յովհ. Ա. 2 :

35. Ամէն բան Քրիստո՞ս ստեղծեց :

Ամէն բան անով եղաւ, և առանց անոր բան մը չեղաւ՝ ի՛նչ որ եղաւ : Յովհ. Ա. 3 :

36. Քրիստոս անփոփո՞խ է :

Յիսուս Քրիստոսը նոյն է երէկ ու այսօր, և յաւիտեանս : Եբր. ԺԳ. 8 :

37. Քրիստոս ամէն բան գիտէ՞ :

Տէ՛ր՝ դուն ամէն բան գիտես : Յովհ. ԻԱ. 17 :

38. Քրիստոս ամէն բան կրնա՞յ ընել :

Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ երկինքի ու երկրի մէջ: Մատթ. ԻԸ. 18:

39. Քրիստոս երկրպագելի՞ է իբրև Աստուած:

Որ ամէնը պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Յովհ. Ե. 23:

40. Աշակերտները Քրիստոսի երկրպագութիւն ըրի՞ն:

Ու երբոր անիկայ տեսան, երկրպագութիւն ըրին անոր: Մատթ. ԻԸ. 17:

41. Քրիստոս մեղաց թողութիւն տուա՞ւ:

Բայց որպէս զի գիտնաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու թողութիւն տալու. (ան ատենը անդամալոյծին ըսաւ,) Ելիր՝ մահիճդ ա՛ռ՝ ու տունդ գնա: Մատթ. Թ. 6:



42. Աստուծմէ ՚ի զատ մէկը մեղաց թողութիւն կրնա՞յ տալ:

Ո՞վ կրնայ մեղաց թողութիւն տալ, բայց միայն Աստուած: Մարկ. Բ. 7:

43. Հայրն Աստուած ի՞նչ ըրաւ Քրիստոսի համար:

Քու աթոռդ ո՛վ Աստուած՝ յաւիտեանս յաւիտենից է: Եբր. Ա. 8:

44. Քրիստոս Աստուծոյ Որդին մարդացա՞ւ:

Աստուած մարմնով յայտնուեցաւ: Ա Տիմ. Գ. 16:

45. Իր վարդապետութիւնները հրաշքներով հաստատե՞ց:

Գո՛նէ գործքերուն համար ինծի հաւատացէք: Յովհ. ԺԴ. 11:

46. Իր հրաշքները շա՞տ էին:

Յիսուս շատ ուրիշ նշաններ ալ ըրաւ իր աշակերտներուն

առջին, որ աս գրքիս մէջ գրուած չեն: Յովհ. Ի. 30:

47. Ի՞նչ գործով զբաղեցաւ երկրիս վրայ:

Գտանեցաւ բարիք ընելով: Գործ. Ժ. 38:

48. Քրիստոս մի միայն Փրկի՞չն է:

Ասկէ 'ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքին տակը մարդոց մէջ տրուած, որ անով կարող ըլլանք փրկուելու: Գործ. Դ. 12:

49. Քրիստոս մի միայն Միջնո՞րդ է:

Մէկ միջնորդ մը (կայ) Աստուծոյ ու մարդոց մէջը՝ Քրիստոս Յիսուս մարդը: Ա Տիմ. Բ. 5:

50. Քրիստոս մեր Բարեխօ՞սն է:

Հօրը քով Բարեխօս ունինք Յիսուս Քրիստոս արդարը: Ա Յովհ. Բ. 1:

51. Քրիստոս մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ՞:



Որ նաև մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ: Հռովմ. Ը. 31:

52. Քրիստոս փոքր տղաքները կը սիրէ՞. և կ'ուզէ՞ որ իրեն գան անոնք:

Յիսուս ըսաւ, Թո՛ղ տուէք աս մանր տղոցը, և մի՛ արգիլէք անոնք ինծի գալէն: Մատթ. ԺԹ. 14:

53. Չար սիրտ ունի՞ս դուն:

Սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է: Երեմ. ԺԷ. 9:

54. Փոքր տղաքն ալ կը մեղանչե՞ն:

Որովայնէն կը մոլորին՝ սուտ խօսելով: Սաղմ. ԾԸ. 3:

55. Ի՞նչ է Աստուծոյ օրէնքին վճիռը մեղաւորներուն դէմ:

Այն անձը որ մեղք կը գործէ՝ անիկայ պիտի մեռնի: Եզեկ. ԺԸ. 20:

56. Ուրեմն ի՞նչպէս կրնաս երկինքը երթալ:

Թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել: Յովհ. Գ. 3:

57. Ի՞նչ է նորէն ծնանիլը:

Ձեր միտքին հոգիովը նորոգուիք: Եփես. Դ. 23:

58. Ի՞նչպէս կրնանք գիտնալ մէկուն նորէն ծնած ըլլալը:

Ան ամէնը որ Աստուծմէ ծնած է, աշխարհքին կը յաղթէ: Ա Յովհ. Ե. 4:

59. Սուրբ Հոգին ի՞նչ գործ կը տեսնայ մեր նորէն ծնանելուն մէջ:

Թէ որ մէկ մարդ մը ջուրէն ու Հոգիէն չծնանի, չկրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Յովհ. Գ. 5:

60. Սուրբ Հոգիէն նորոգուա՞ծ ենք մենք:

Մեզ փրկեց նորէն ծնանելու աւազանին միջոցովը՝ ու Սուրբ



Հոգիին նորոգելովը: Տիտ. Գ. 5:

61. Հոգին Սուրբ Աստուած կոչուա՞ծ է Սուրբ Գրոց մէջ:

Ինչո՞ւ Սատանան քու սիրտդ լեցուց, որ դուն Հոգւոյն Սրբոյ սուտ խօսիս. Չէ՛ թէ մարդոց սուտ խօսեցար, հապա Աստուծոյ: Գործ. Ե. 3, 4:

62. Ի՞նչ են Հոգիին պտուղները:

Հոգիին պտուղը աս է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն, ժուժկալութիւն: Գաղ. Ե. 22, 23:

63. Կրնա՞յ մէկ մարդ մը քրիստոնեայ ըլլալ, առանց իր գործքերովը ցուցունելու թէ քրիստոնեայ է:

Իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք: Մատթ. Է. 20:

64. Պարտաւո՞ր ենք աղօթք ընել:

*Պէտք է ամէն ատեն աղօթք ընել :* Ղուկ . ԺԸ . 1 :

65 . Բոլոր կարօտ եղած բաներնուս համար աղօթք ընելո՞ւ ենք :

*Ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով , գոհութիւնով մէկտեղ ձեր խնդրուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ :* Փիլիպ . Դ . 6 :

66 . Որո՞ւն անունովը աղօթք ընելու ենք :

*Իմ անունովս ի՛նչ որ խնդրէք , պիտի կատարեմ անիկայ :* Յովհ . ԺԴ . 13 :

67 . Քրիստոս կ'ըսէ՞ թէ պիտի պարգեւէ խնդրածներնիս :

*Խնդրեցէ՛ք՝ և պիտի տրուի ձեզի :* Մատթ . Է . 7 :

68 . Աղօթքիդ պատասխանը պիտի ընդունի՞ս , թէ որ մեղաց մէջ յարատեւես :

*Թէ որ սրտիս մէջը անօրէնութիւն տեսնայի , Տէրը պիտի չլսէր :* Սաղմ . ԿԶ . 18 :



69 . Ինչպէս որ մեզի՝ անանկ ալ ուրիշներուն համար աղօթք ընելո՞ւ ենք :

*Արդ՝ կ'աղաչեմ՝ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել , խնդրուածք , աղաչանք , գոհութիւն՝ ամէն մարդոց համար :* Ա Տիմ . Բ . 1 :

70 . Աստուած ամբարիշտ խօսքերը կ'արգիլէ՞ :

*Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ չառնես :* Ելից Ի . 7 :

71 . Աստուած ի՞նչ պիտի ընէ անոնց՝ որ ամբարիշտ խօսքեր կը գործածեն :

*Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ պիտի չսեպէ :* Ելից Ի . 7 :

72 . Ինչ և իցէ կերպով երդում ընելը մե՞ղք է :

*Երդում չընէ՛ք , ոչ երկնքի վրայ՝ ոչ երկրի վրայ , ոչ ալ մէկ ուրիշ երդում մը :* Յակ . Ե . 12 :

73 . Շաբաթը ի՞նչպէս պահելու ենք :

Հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար : Ելից Ի . 8 :

74 . Որո՞ւն համար եղաւ Շաբաթը :

Շաբաթը մարդուն համար եղաւ : Մարկ . Բ . 27 :

75 . Ե՞րբ հաստատուեցաւ Շաբաթը :

Աստուած . . . . . եօթներորդ օրը հանգստացաւ իր ըրած բոլոր գործքերէն . և օրհնեց Աստուած եօթներորդ օրը . ու սրբեց զանիկայ : Ծննդ . Բ . 2, 3 :

76 . Ի՞նչ խոստացաւ Աստուած Իսրայէլացւոց՝ թէ որ Շաբաթը սուրբ պահեն :

Թէ որ շաբաթը՝ իմ սուրբ օրս՝ քու ցանկութիւնդ կատարելէն ոտքդ դարձընես , ու շաբաթը՝ քու զուարճութիւնդ , և Տէրոջը նուիրուած օրը՝ պատուական



անուանես , ու զանիկայ պատուես , քու ճամբաներուդ չհետևելով , քու ցանկութիւնդ չըկատարելով , ու պարապ խօսք չխօսելով , անատենը Տէրոջմով պիտի ուրախանաս . և քեզ երկրիս բարձր տեղուանքը պիտի հանեմ , ու քու հօրդ Յակոբին ժառանգութիւնը քեզի պիտի կերցընեմ . քանզի Տէրոջը բերանը խօսեցաւ : Եսայ . ԾԸ . 13, 14 :

77 . Տղաքները պարտակա՞ն են իրենց ծնողացը հնազանդելու :

Որդիներ՝ ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողքներուն . ինչու որ ան է Տէրոջը առջևը հաճելի : Կող . Գ . 20 :

78 . Ի՞նչ կ՚ըսէ Աստուածաշունչը ան տղոց վրայով՝ որոնք ծնողքնին չեն յարգեր :

Անիծեա՛լ ըլլայ ան՝ որ իր հօրը

կամ մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ ։ Բ Օրէն. Իէ. 16 ։

79. Ծերերուն հետ յարգութեամբ վարուելո՞ւ ենք ։

Մազը ճերմկածին առջեւ ոտք ելիր, և ծերը պատուէ ։ Ղեւ. ԺԹ. 32 ։

80. Պէ՞տք է որ ծնողք իրենց տղաքը թող տան որ չարութիւն գործեն. կա՛մ թէ արդարութեան ճամբուն մէջ կրթելու են զանոնք ։

Արժէ մանուկը իր ճամբան սկսած ատենը որ իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի ։ Առակ. ԻԲ. 6 ։

81. Աստուած կը պատուիրէ՞ ծնողաց որ իրենց տղաքը պատժեն անոնց չարութիւն ըրած ատենը ։

Քանի որ յոյս կայ տղադ խրատէ, և անոր աղաղակին ականջ մի' դներ ։ Առակ. ԺԹ. 18 ։



82. Աստուած ի՞նչ ըրաւ Հեղիին իր տղաքը չարութենէ չարգիլելուն համար ։

Իրեն իմացուցեր եմ, որ անոր տունը մինչև յաւիտեան պիտի դատեմ, իր գիտցած անօրէնութեանը համար. քանզի անոր որդիքը իրենց վրայ անէծք կը բերեն, ու անիկայ չյանդիմաներ զանոնք ։ Ա Թագ. Գ. 13 ։

83. Պատուիրուա՞ծ է որ մարդասպանութիւն չընենք ։

Սպանութիւն մի' ըներ ։ Ելից Ի. 13 ։

84. Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը իր եղբայրը ատողին համար ։

Ամէն ո'վ որ իր եղբայրը կ'ատէ, մարդասպան է ։ Ա Յովհ. Գ. 15 ։

85. Արժա՞ն բարկութիւն պահել ներսերնիս ։

Երբեք ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ ։ Եփես. Դ. 26 ։

86. Չարին չար հատուցանելո՞ւ ենք :

Մի՛ ըսեր թէ՝ Անիկայ ինծի ինչպէս որ ըրաւ, ես ալ անոր այնպէս պիտի ընեմ: Առակ. ԻԴ 29 :

87. Աստուածաշունչը անվայել խօսքերը կ'արգիլէ՞ :

Բնաւ ձեր բերնէն ապականեալ խօսք մը չելլէ : Եփես. Դ. 29 :

88. Ի՞նչ կ'ըսէ Տէր Փրկիչը սրտով մաքուր եղողներուն համար :

Երանի անոնց՝ որ սրտով մաքուր են, ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած : Մատթ. Ե. 8 :

89. Իրաւո՞ւնք է քուկդ չեղած բանը առնել :

Գողութիւն մի՛ ըներ : Ելից Ի. 15 :

90. Սուտ կշիռներն ու չափերը արգիլուա՞ծ են :



Նենգութեան կշիռքը Տէրոջը առջեւ պիղծ է : Առակ. ԺԱ. 1 :

91. Խաբէութիւնը արգիլուա՞ծ է :

Չըլլայ որ ատ բանին մէջ չափէ անցնի մէկը, ու իր եղբայրը զրկէ : Ա Թես. Դ. 6 :

92. Մե՞ղք է պարտքը չհատուցանելը :

Ամբարիշտը փոխ կ'առնէ ու չվճարեր : Սաղմ. ԼԶ. 21 :

93. Ստութիւնը արգիլուա՞ծ է :

Ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկերնիդ իր ընկերին հետ : Եփես. Դ. 25 :

94. Աստուած ի՞նչպէս կը նայի ստախօսներուն :

Սուտ շրթունքը Տէրոջը զզուելի է : Առակ. ԺԲ. 22 :

95. Ի՞նչ պիտի ըլլայ վերջը ստախօսներուն :

Բոլոր ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով վառած

լճին մէջը պիտի ըլլայ : Յայտ. ԻԱ. 8 :

96. Մե՞ղք է սուտ լուր տարածելը :

Սուտ լուր պիտի չտարածես : Ելից ԻԳ. 1 :

97. Մե՞ղք է սուտ համբաւ հանելը :

Քու ժողովուրդիդ մէջը չարախօսութիւն ընելու չպտըտիս : Ղևտ. ԺԹ. 16 :

98. Ցանկալը արգիլուա՞ծ է :

Մի՛ ցանկար : Հռոմ. ԺԳ. 9 :

99. Ագահութիւնը Աստուծոյ դէմ մե՞ղք է :

Ագահութիւնը՝ որ կռապաշտութիւն է : Կող. Գ. 5 :

100. Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը արծաթսիրութեան վրայով :

Ամէն չարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է : Ա Տիմ. Զ. 10 :

101. Ագահ մարդը կը կշտանա՞յ :

Արծաթ սիրողը արծաթէն



չկշտանար . ոչ ալ հարստութիւն սիրողը երկրին բերքէն : Ժող. Ե. 10 :

102. Մեր վիճակէն պարտակա՞ն ենք գոհ ըլլալ :

Ես սորվեցայ գոհ ըլլալ իմ գտնուած վիճակիս մէջ : Փիլիպ. Դ. 11 :

103. Մե՞ղք է սրտերնիս աշխարհային բաներու տալը :

Մի՛ սիրէք աշխարհս , ոչ ալ ինչ որ աշխարհիս մէջ է : Ա Յովհ. Բ. 15 :

104. Կրնա՞յ ըլլալ որ փոքր բաներու մէջ ալ յանցաւոր սեպուինք , ինչպէս որ մեծ բաներու մէջ :

Ով որ բոլոր օրէնքը պահէ , ու մէկ բանի մէջ յանցաւոր ըլլայ , անիկայ ամենուն պարտական կ'ըլլայ : Յակ. Բ. 10 :

105. Ո՞րը առաւել կ'ուզէս ունենալ, բարի անուն մը՝ թէ շատ արծաթ :

Բարի անունը շատ հարստութենէն աւելի ընտիր է : Առակ. ԻԲ. 1 :

106. Հարստութեան ծարէն ի՞նչ վտանգ կայ :

Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի՝ որ հարուստը դժուարաւ պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը : Մատթ. ԺԹ. 23 :

107. Հոգիէն աւելի ծանրագին բան մը կա՞յ :

Ի՞նչ օգուտ է մարդուն՝ որ բոլոր աշխարհը վաստըկի, և իր անձը կորսընցընէ . կամ իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ : Մարկ. Ը. 36, 37 :

108. Պատուիրուա՞ծ է որ բարերար և ողորմած ըլլանք :

Բարերարութիւնը, ու աղքատներուն պէտք եղածին հաղորդ ըլլալը մի՛ մոռնաք . ինչու որ Աստուած անանկ պատարագներուն կը հաճի : Եբր. ԺԳ. 16 :



109. Որո՞նց բարիք ընելու ենք :

Ուստի քանի որ ժամանակը ձեռքերնիս է, բարիք ընենք ամենուն՝ մանաւանդ հաւատքին ընտանիներուն : Գաղ. Զ. 10 :

110. Աղքատներն ալ կրնա՞ն հարուստներուն պէս բարերար ու առատաձեռն ըլլալ :

Թէ որ առաջ յօժարութիւնը ըլլայ՝ տալը ունեցածին չափովը ընդունելի է, ու չէ թէ չունեցածին չափովը : Բ Կորնթ. Ը. 12 :

111. Ի՞նչպէս վարուելու ենք՝ երբոր մարդիկ մեզի հետ թշնամութեամբ վարուին :

Սիրեցէք ձեր թշնամիները . օրհնեցէք ձեզ անիծողները . բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ՚ատեն, և աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը չարչըրկեն ու կը հալածեն : Մատթ. Ե. 44 :

112. Ի՞նչ է անչափաւորութեան հետեւութիւնը այս աշխարհիս մէջ:

Գինեմոլն ու շուայտը աղքատ կ'ըլլան: Առակ. ԻԳ. 21:

113. Ի՞նչ պիտի ըլլայ գինեմոլներուն՝ գալու աշխարհին մէջ:

Ոչ գողերը՝ ոչ ագահները՝ ոչ գինովները՝ ոչ նախատողները ու ոչ յափշտակողները՝ Աստուծոյ թագաւորութիւնը պիտի չժառանգեն: Ա Կորնթ. Զ. 10:

114. Թէ որ ասանկ են գինեմոլութեան հետեւութիւնները այս աշխարհիս և գալու աշխարհին մէջ, ինքզինքդ փորձութեան մէջ ձգելո՞ւ ես:

Մի՛ նայիր գինիին կարմրութեանը՝ գաւաթին մէջ իր գոյնը ցուցնելուն՝ ու շիտակ վազելուն. անիկայ ետքը օձի պէս կը խածնէ, ու քարբի պէս կը խայթէ: Առակ. ԻԳ. 31, 32:

115. Յօժար պիտի ըլլա՞ս ձեռք քաշելու գինովցնող հեղուկներ գործածելէ, թէ որ քու օրինակդ պատճառ պիտի ըլլայ ուրիշներուն անչափաւորութեան իյնալուն:



Աղէկ է միս չուտել, և գինի չխմել, ոչ ալ բան մը ընել, որով քու եղբայրդ կը գլորի՝ կամ կը գայթակղի՝ կամ կը տկարանայ: Հռովմ. ԺԴ. 21:

116. Աղէ՞կ է փորձութեան տեղն երթալը:

Անկէ զգուշացի՛ր. անոր քովէն մի՛ անցնիր. անկէ խոտորէ՛, ու անցի՛ր: Առակ. Դ. 15:

117. Ի՞նչպէս կրնաս դէմ դնել Սատանային փորձութիւններուն:

Վրանիդ հագէք Աստուծոյ սպառազինութիւնը, որ կարող ըլլաք Սատանային հնարքներուն դէմ դնելու: Եփես. Զ. 11:

118. Ի՞նչ կ'ըսէ Քրիստոս խաղաղարարներուն վրայով:

Երանի՜ խաղաղութիւն ընողներուն, ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: Մատթ. Ե. 9:

119. Անձնասէր ըլլալո՞ւ է: Քրիստոս անձնասէ՞ր էր:

Քրիստոս ալ չէ թէ իր անձին հաճոյ եղաւ: Հռովմ. ԺԵ. 3:

120. Ծոյլ ըլլալո՞ւ է:

Ծոյլ մարդը անօթի կը մնայ: Առակ. ԺԹ. 15:

121. Պարտաւո՞ր ենք ինքնատիրութիւն ունենալ:

Երկայնամիտ մարդը հզօր մարդէն աղէկ է, ու իր ոգին զսպողը՝ քաղաք առնողէն: Առակ. ԺԶ. 32:

122. Կարեկից ու խոնարհ ըլլալո՞ւ ենք:

Ըլլաք կարեկից ու խոնարհ: Ա Պետ. Գ. 8:

123. Աղէ՞կ է խստութեամբ պատասխան տալ մարդու մը:



Մեղմ պատասխանը սրտմտութիւնը կ'իջեցնէ: Առակ. ԺԵ. 1:

124. Իրաւո՞ւնք է շողոքորթութիւն ընելը:

Իր ընկերին շողոքորթութիւն ընող մարդը՝ անոր քայլերուն որոգայթ կը լարէ: Առակ. ԻԹ. 5:

125. Զարտուղութիւններուն ճամբան դիւրի՞ն է:

Անօրէններուն ճամբան դժուարին է: Առակ. ԺԳ. 15:

126. Ի՞նչպէս է արդարներուն ճամբան:

Անոր ճամբաները հաճոյական ճամբաներ են, և անոր բոլոր շաւիղները խաղաղութիւն են: Առակ. Գ. 17:

127. Ամբարիշտները երջանի՞կ են:

Ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան, կ'ըսէ Տէրը: Եսայ. ԽԸ. 22:

128. Պէտք է մեռնի՞նք :

Մարդոց սահմանուած է մէկ անգամ մը մեռնիլ, ու անկէ ետքը դատաստան : Եբր. Թ. 27 :

129. Մեղքն ի՞նչպէս մտաւ աշխարհք :

Մէկ մարդէ մը մեղքը աշխարհք մտաւ, և ան մեղքէն մահը : Հռովմ. Ե. 12 :

130. Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը քրիստոնէից համար երբոր մեռնին :

Երանելի են ան մեռելները՝ որոնք Տէրոջմով կը մեռնին : Յայտ. ԺԴ. 13 :

131. Քրիստոնեաները կրնա՞ն յաղթել մահուան :

Մահը յաղթութեան մէջ ընկղմեցաւ : Ա Կորնթ. ԺԵ. 54 :

132. Ո՞վ կու տայ անոնց յաղթութիւնը :

Գոհութիւն Աստուծոյ, որ մեզի յաղթութիւն կու տայ մեր



Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքովը : Ա Կորնթ. ԺԵ. 57 :

133. Նորէն կեանքի պիտի գա՞ն անոնք :

Ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր ձայնը պիտի լսեն, ու դուրս պիտի գան : Յովհ. Ե. 28, 29 :

134. Մարմինը յարութիւն պիտի առնէ՞ :

Աս ապականացու մարմինը անապականութիւն հագնի : Ա Կորնթ. ԺԵ. 33 :

135. Աստուծոյ առջևն ամէնը պիտի կայնի՞ն դատուելու :

Տեսայ պզտիկ ու մեծ մեռելները՝ որ աթոռին առջևը կայնած էին. ու գիրքերը բացուեցան, և ուրիշ գիրք մը բացուեցաւ այսինքն կենաց գիրքը. և գիրքերուն մէջը գրուածներէն մեռելները դատուեցան իրենց

գործքերուն համեմատ: Յայտ. Ի. 12:

136. Դատաստանին օրը Յիսուս ի՞նչ պիտի ըսէ անոնց՝ որ զինքը կը սիրեն:

Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէ՛ք: Մատթ. ԻԵ. 34:

137. Ի՞նչ պիտի ըսէ Յիսուս մեղաւորներուն՝ դատաստանին օրը:

Մէկդի՛ գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը, որ պատրաստուած է Սատանային ու իր հրեշտակներուն: Մատթ. ԻԵ. 41:

138. Քրիստոս տեղ մը պատրաստե՞ց զինքը սիրողներուն համար:

Կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ: Յովհ. ԺԴ. 2:

139. Բոլոր հոն գացողները հաւասարապէս երջանիկ պիտի ըլլա՞ն:



Երեսիդ առջին լեցուն ուրախութիւն կայ. քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան: Սաղմ. ԺԶ. 11:

140. Երկինքի բնակիչները նեղութիւն մը պիտի ունենա՞ն:

Աստուած անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, ու ալ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ՝ և ոչ աղաղակ՝ և ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետև: Յայտ. ԻԱ. 4:

141. Դիւրի՞ն է արքայութիւն երթալը:

Ջանք ըրէք որ նեղ դռնէն մտնէք. քանզի կ'ըսեմ ձեզի, որ շատերը մտնել պիտի ուզեն, և պիտի չկրնան: Ղուկ. ԺԳ. 24:

142. Ամէն մարդ կը սիրէ՞ ու կը փնտռէ՞ երկինքին ուրախութիւնները:

Ան բաները որ աչք չէ տեսեր, և ականջ չէ լսեր, ու մարդու սրտին մէջ չէ ինկեր, Աստուած իր սիրելիներուն պատրաստեց.

բայց Աստուած մեզի յայտնեց իր Հոգիովը: Ա Կորնթ. Բ. 9, 10:

143. Ի՞նչ է քու բոլոր պարտաւորութիւնը առ Աստուած և առ մարդ:

Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և քու բոլոր անձովդ, ու քու բոլոր մտքովդ. և քու ընկերդ սիրես քու անձիդ պէս: Մատթ. ԻԲ. 37-39:

144. Ի՞նչպէս կրնանք ցուցանել մեր սէրն առ Աստուած:

Թէ որ զիս կը սիրէք, իմ պատուիրանքներս պահեցէք: Յովհ. ԺԴ. 15:

145. Ի՞նչպէս կրնաս գիտնալ Թէ ի՞նչպէս գործելու ես ուրիշներուն:

Ինչոր կ'ուզէք որ մարդիկ ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք: Ղուկ. Զ. 31:

146. Ի՞նչ կը պահանջէ Աստուած որ հիմա՝ քու երիտասարդութեան օրերուդ մէջ ընես:



Միթէ ասկէ ետքը ինծի պիտի չաղաղակե՞ս ըսելով. Ո՛վ Հայր իմ՝ դուն ես իմ մանկութեանս առաջնորդը: Երեմ. Գ. 4:

147. Թէ որ Աստուած քու առաջնորդդ ընես, ան ի՞նչ պիտի պահանջէ քեզմէ:

Տէրը քեզմէ ի՞նչ կը պահանջէ, բայց միայն իրաւունք ընել, ողորմութիւն սիրել, ու խոնարհութեամբ քու Աստուծոյդ հետ քալել: Միք. Զ. 8:

148. Ի՞նչ է ճշմարիտ հաւատոյ բովանդակութիւնը:

Աս բոլոր խօսքին վախճանը լսենք. Աստուծմէ վախցի՛ր, ու անոր պատուիրանքները պահէ՛. վասն զի մարդուս բոլոր պարտաւորութիւնը ասիկայ է: Քանզի Աստուած ամէն գործքը՝ ամէն ծածուկ բաներու հետ՝

թէ՛ բարին և թէ՛ չարը՝ դատաստանի պիտի բերէ ։ Ժող. ԺԲ. 13, 14 ։

---

### ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հա՛յր մեր՝ որ երկինքն ես,
Քու անունդ սուրբ ըլլայ.
Քու թագաւորութիւնդ գայ,
Քու կամքդ ըլլայ, ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վրայ.
Մեր ամէն աւուր հացը՝ այսօր մեզի տուր.
Եւ մեզի ներէ՛ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականներուն.
Ու մեզ փորձութեան մի՛ տաներ.
Հապա չարէն մեզ ազատէ.
Ինչու որ քուկդ է Թագաւորութիւնը և Զօրութիւնը ու Փառքը յաւիտեանս. ամէն ։



### ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐԸ

Ա. Իմ առջևս ուրիշ աստուածներ չունենաս ։

Բ. Դուն քեզի կուռք չշինես, ո՛չ ալ վերը երկինքի մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. Անոնց երկրպագութիւն չընես, ու անոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն իս. և կ'ողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կը սիրեն իս ու իմ պատուիրանքներս կը պահեն ։

Գ. Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը բերանդ

չառնես․ ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ պիտի չսեպէ ։

Դ․ Հանգստութեան օրը մի՛տքդ բեր՝ անիկայ սուրբ պահելու համար ։ Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործքդ ընես․ բայց եօթներորդ օրը՝ Տէրոջը քու Աստուծոյդ հանգըստութեան օրն է․ ան օրը գործ մը պիտի չգործես, ո՛չ դուն՝ ո՛չ քու որդիդ՝ ո՛չ քու աղջիկդ՝ ո՛չ քու ծառադ ու աղախինդ՝ ո՛չ քու անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջ եղած օտարականդ․ քանզի Տէրը վեց օրուան մէջ բրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ․ անոր համար Տէրը օրհնեց հանգըստութեան օրը՝ ու սրբեց անիկայ ։



Ե․ Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկան ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի ։

Զ․ Սպանութիւն մի՛ ըներ ։

Է․ Շնութիւն մի՛ ըներ ։

Ը․ Գողութիւն մի՛ ըներ ։

Թ․ Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ըներ ։

Ժ․ Քու դրացիիդ տանը մի՛ ցանկար․ քու դրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր աղախինին՝ կամ անոր եզին՝ կամ անոր իշուն՝ և քու դրացիիդ ամենևին մէկ բանին մի՛ ցանկար ։ Ելք Ի․ 3-17 ։

## ՏԵԱՌ. ՊԱՏՈՒԻՐԱՆՔՆԵՐՈՒՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Քու Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ, և քու բոլոր անձովդ, ու քու բոլոր մտքովդ · աս է առաջին ու մեծ պատուիրանքը։

Երկրորդը ասոր նման՝ Քու ընկերդ սիրես քու անձիդ պէս։

Աս երկու պատուիրանքէս կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները։ Մատթ. ԻԲ. 37-40։

---

## ՀԱՄԱՌՕՏ ԽՕՍՔԵՐ

Աստուած ստեղծեց երկինքը ու
երկիրը,
Ու անոնց մէջը եղած ամէն բա-
ները ·
Ադամ նախահայր առաջին
մարդը,
Ու անոր կողէն իր Եւա կինը։
Աստուած ստեղծեց նաև մեզ,



Ու ան կը պահէ ամէն օր մեզ ·
Աստուած կու տայ մեր հացը ու
հանդերձը,
Ու մեզի պէտք եղած ամէն բա-
ները։

---

Աստուած ամենուն վրայ թա-
գաւոր է ·
Ինքը սուրբ ու իմաստուն է ·
Արդար ու ճշմարիտ է ·
Ամենուս երկնաւոր Հայրն է։
Պէտք է որ զինքը սիրենք ու
իրմէն վախնանք ·
Իր պատուիրանքները պահենք ·
Պզտիկուց զինքը ճանչնանք,
Ու իրեն կամքը սորվինք։

---

Աստուած հոս է ու ամէն տեղ է ·
Ամէն բան գիտէ ու կը տեսնէ ·
Երբոր աղօթք ընենք մեր ձայնը
կը լսէ ·
Մեզի շնորհք կու տայ ու մեզ
կը սիրէ։

Երբ որ մեղք գործենք մեզ կը
պատժէ .
Հոգինիս դժոխքը կը խրկէ :
Եթէ անանկ է աղօթք ընենք ,
Որ մեզ մեղքէ ազատ պահէ :

---

Աղէկ տղաքը Աստուծմէ կը
վախնան :
Թէ որ Աստուած կը սիրես ան
ալ քեզ կը սիրէ :
Ես կը սիրեմ Աստուած որ ան
ալ իս սիրէ :
Ես կը վախնամ իրմէն ու կը
պահեմ իր խօսքը :
Աստուծոյ խօսքը ճշմարիտ է :
Աստուծոյ խօսքը Աստուածա-
շունչին մէջ է :
Աստուածաշունչը ամէն գիրքէն
աղէկ է :
Հին և Նոր Կտակարանը Աս-
տուածաշունչ է :





Ու փուշերէ պսակ մը հիւսելով՝ անոր գլուխը դրին , ու եղէգ մը անոր աջ ձեռքը . և անոր առջևը ծնկան վրայ գալով՝ ծաղր կ՚ընէին անիկայ , ու կ՚ըսէին . Ողջոյն քեզ՝ Հրէից Թագաւոր : Մատթ . Իէ . 29 :

---

Աստուած մեզ սիրելուն իր Որ-
դին տուաւ .
Յիսուս Քրիստոս Որդի Աս-
տուծոյ է .

Ինքը մեր Տէրը ու Փրկիչն է .
Կատարեալ մարդ ու կատարեալ Աստուած է .
Քրիստոս մեզ սիրելուն երկինքէն իջաւ .
Մեզի համար խաչին վրայ մեռաւ .
Աշխարհքի մեղքին համար՝ արիւն թափեց .
Մեզ Աստուծոյ հետ հաշտեցուց :

---

Յիսուս Քրիստոս խաչուեցաւ ու թաղուեցաւ .
Իրեք օրէն յարութիւն առաւ .
Քառսուն օր աշխարհի վրայ կեցաւ .
Ետքը երկինքը համբարձաւ .
Դատաստանին օրը նորէն պիտի գայ .
Արդարները մեղաւորներէն պիտի զատէ .



Արդարները Արքայութիւն պիտի տանի .
Մեղաւորները Դժոխք պիտի խրկէ :

---

Ո՛վ Տէր ինծի շնորհք տուր քեզ սիրել ,
Ու քու պատուիրանքներդ պահել .
Նաև իմ ընկերներս սիրել ,
Ու անոնց բարի ընել :
Ո՛վ Տէր՝ իմ անմահ հոգիս փրկէ .
Սուրբ Արքայութեանդ արժանի ըրէ .
Ո՛վ Հայր և Որդի և Սուրբ Հոգի ,
Սուրբ Երրորդութիւն անբաժանելի :

## ԱՍՏՈՒԱԾ ԱՄԷՆ ՏԵՂ :

Աստուծոյ աթոռն փնտռող .
Զան ամէն տեղ կը գտնայ .
Մենք երբոր ենք աղօթող
Տէրն է միշտ մեզի ներկայ :

Թէ հարուստ ենք թէ աղքատ ,
Թէ առողջ կամ թէ տկար ,
Երբ մեր ձայնն է անընդհատ
Տէրն է միշտ մեզի ներկայ :

Երբ ճարերըս կը հատնին ,
Ու ինծի հանգիստ չկայ ,
Եւ ուժերս կը լքանին ,
Տէրն է միշտ մեզի ներկայ :

Ո՛վ հոգիս , Փրկչեդ եկո՛ւր ,
Ինչ տագնապ որ վրադ կու-
գայ ,
Ան պարապ քեզ չթողուր .
Տէրն է միշտ մեզի ներկայ :



## ՊԶՏԻԿ ՏՂՈՒ ՄԸ ԱՂՕԹՔԸ :

Պզտիկ տղու մը սորվեցո՛ւր ,
Ո՛վ տէր , աղօթք ընել .
Ու Սուրբ Հոգիդ ինծի խրկէ
Չար սիրտըս նորոգել :

Ինկած էակ մը ծնունդէս
Քեզի դէմ մեղք բրի .
Ու թէ որ դուն ինծի չօգնես ,
Հոգիս կը կորսուի :

Բայց տէր Յիսուս՝ հզօր փրկիչ ,
Մեղքերըս սրբելու ,
Մեռար , յարեար ու համբար-
ձար
Հոգիս ազատելու :

Ով որ կանուխ զան կը փնտռէ
Անշուշտ պիտի ապրի .
Յիսուս անոր կ'առաջնորդէ ,
Որ հետը բնակի :

## ՄԻ ԹՈՂՈՒՐ ԶԻՍ :

Մի՛ թողուր զիս, ո՛վ Աստուա-
ծըս,
Թող քեզմէ չմոլորիմ.
Ուժովցուր դուն իմ քալուած-
քըս,
Եթէ ոչ կը կորսուիմ.
Պաշտպանէ զիս,
Պահպանէ զիս,
Որ երբեք չկորսուիմ:

Աշխարհիս անթիւ հոգերը
Կը վռնտեն զիս՝ Տէր, քեզմէ.
Սատանան իր հրապոյրները
Իմ առջեւըս կը դնէ.
Վարմերովը՝
Նենգերովը՝
Թող զիս չմոլորցընէ:

Ո՛վ Յիսուս, ցրուէ վախերըս,
Քու խոստմունքդ է հաստա-
տուն.



Դուն կրնաս ներել մեղքերըս.
Ինձ լսել տուր ձայնդ սիրուն.
Դուն ես լոյսըս,
Դուն ես յոյսըս,
Մի միայն փրկիչըս դուն:

---

## ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ :

Ո՛վ հոտիդ բարերար Հովիւը
Ոչխարներդ կը պահես քու քո-
վըդ.
Կը տանիս անոնք հոն սիրովըդ,
Ուր որ երջանիկ կ՚ըլլան:
Զիս ալ ա՛ռ, կ՚աղաչեմ, ո՛վ
Տէրըս,
Զօրացո՛ւր իմ տկար ոտքերըս,
Եւ ներէ՛ իմ անթիւ մեղքերըս,
Որ ես քու գառնուկդ ըլլամ:

Ո՛վ Յիսուս, թող քալեմ քու
քովըդ.
Զիս լուա՝ քու արիւնովդ.

Իմ հոգիս տա՛ր երկինք սիրովդ,
Որ հոն ապահով ըլլամ:
Հոն կյնամ ես Փրկչիդ առջևը ,
Տամքեցի գոհութիւն՝ պատիւը,
Որ դուն ես սիրելի Հովիւը ·
Քու բակդ յաւիտեան կենամ:

---

### ՓՈՔՐ ԲԱՆԵՐ:

Փոքր կաթիլները
Մեծ ծովեր կ՚ընեն ·
Աւազի հատերը
Լեռներ կը դիզեն :

Փոքր վայրկեանները
Թէպէտ ոչինչ են ,
Անվախճան դարերը
Լոկ անոնցմէ են :

Փոքր յանցանքները
Սիրտն կ՚ապականեն ,
Եւ շատ մեծ մեղքերը
Անոնցմէ կ՚ելլեն :



Փոքր բարիքները
Շատ մարդոց կ՚ազդեն ,
Եւ սիրոյ խօսքերը
Հոս երկինք կ՚ընեն :

---

### ՅԱՐԱՏԵՒՈՒԹԻՒՆ

Աս է դաս մը որ սորվիս ,
Ջանք ըրէ , ջանք ըրէ ·
Թէ առաջ չյաջողիս ,
Նորէն ջանք ըրէ :
Քաջութիւնըդ կը յայտնես
Երբ միայն կը համբերես ·
Մի վախնար , պիտի յաղթես ·
Ջանք ըրէ , ջանք ըրէ :

Շատ անգամ կը սխալի՞ս ·
Ջանք ըրէ , ջանք ըրէ ·
Վերջը պիտի յաջողիս ,
Նորէն ջանք ըրէ :
Թող ըրածդ ըլլայ պակաս ·
Չէ ամօթ՝ երբ կը ջանաս ·

Յուսացող և քաջ ըլլաս .
Ջանք ըրէ , ջանք ըրէ :

Թէ որ գործդ դժուար ըլլայ ,
Ջանք ըրէ , ջանք ըրէ .
Վերջը վարձքը պիտի գայ .
Նորէն ջանք ըրէ .
Ինչ որ մարդ կրցաւ ընել ,
Չե՞ս կրնար ան կատարել .
Բայց պէտք է յարատևել .
Ջանք ըրէ , ջանք ըրէ :



## ՀԱԶԱՐԱՄԵԱՆ ԽՕՍՔ

 ը  ին

հետ պիտի բնակի , ու

 ը  ին

հետ պիտի պառկի . և

 ը , ու առոյգ  ը ,

և պարարտ զուարակը մէկտեղ պիտի արածին .

ու անմեղ մէկ պզտիկ  մը պիտի քշէ :

Եսայ . ժա . 6 :

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ



Քանզի գի–
տեմ անիկայ,
(Աբրահամը,)
որ իր որդւոցը՝ ու իրմէ ետքը իր
տանը պիտի պատուիրէ, և ա–



նոնք . . . . Տէրոջը ճամբան պի–
տի պահեն : Ծննդ. ԺԸ. 19 :

Բայց ես ու իմ տունս Եհովան
պիտի պաշտենք : Յես. ԻԴ. 15 :

---

## ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԱՌ ԾՆՈՂՍ

Ձեր ամէն մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ : Ղեւ. ԺԹ. 3 :

Ո՛րդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտի՛կ ըրէ, ու քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր : Առակ. Ա. 8:

Քանզի Աստուած պատուիրեց՝ ըսելով. Քու հայրդ ու մայրդ պատուէ՛. և ով որ իր հայրը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի : Մատթ. ԺԵ. 4:

Ո՛րդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղէք Տէրոջմով, որ ան է արժանը : Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, (որ առջի պատուի–

բանքն է խոստմունքով ,) որ քեզի աղէկ ըլլայ , ու երկար կեանք ունենաս երկրի վրայ : Եփես . Զ . 1-3 :

Որդիներ՝ ամէն բանի մէջ հնազանդ եղէք ձեր ծնողքներուն . ինչու որ ան է Տէրոջը առջեւ հաճելի : Կող . Գ . 20 :

---

### ԸՆԿԵՐԱՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Որդեակ իմ՝ թէ որ մեղաւորները քեզ գլխէ հանել ուզեն , դուն անոնց հաւանութիւն մի՛ տար : Որդեակ իմ՝ անոնց հետ ճամբայ մի՛ երթար . անոնց շաւիղէն քու ոտքերդ ե՛տ պահէ . քանզի անոնց ոտքերը չարութեան կը վազեն , և արիւն թափելու կ՚արտորան : Առակ . Ա . 10 , 15 , 16 :

Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ՚ըլլայ . բայց ան-



միտներուն հետ ընկերացողը չար կ՚ըլլայ : Առակ . ԺԳ . 20 :

Բարկացող մարդուն հետ ընկերութիւն մի՛ ըներ , ու ցասկոտ մարդուն հետ մի՛ երթար . որ չըլլայ թէ անոր ճամբաները սորվիս , և քու հոգւոյդ որոգայթ փաստըկիս : Առակ . ԻԲ . 24 , 25 :

---

### ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃՈՒԹԵԱՆՑ ՎՐԱՅՈՎ

(Չարերը) իրենց պզտիկները՝ ոչխարի հօտի պէս կը հանեն . ու անոնց տղաքը ուրախութեամբ կը ցատկըտեն : Թմբուկով ու քնարով ձայն կը վերցընեն , ու սրինգին ձայնովը ուրախ կ՚ըլլան : Անոնք օրերնին զուարճութիւնով կ՚անցունեն , ու մէկ վայրկեանի մէջ գերեզմանը կ՚իջնան : Եւ Աստուծոյ կ՚ըսեն .

Քաշուէ՛ մեզմէ, ինչու որ քու ճամբաներդ գիտնալ չենք ուզեր : Յոբ. ԻԱ. 11-14 :

Ո՛վ երիտասարդ՝ քու մանկութեանդ մէջ ուրա՛խ եղիր. ու երիտասարդութեանդ օրերուն մէջ՝ սիրտդ թող քեզ զուարճացունէ՛. և քու սրտիդ ճամբաներովը, ու աչքերուդ նայուածքովը քալէ՛. բայց գիտցի՛ր որ ասոնց ամենուն համար Աստուած քեզ դատաստանի պիտի բերէ : Ժող. ԺԱ. 9 :

Բայց ձեզի կ՚ըսեմ, թէ Ամէն դատարկ խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան : Մատթ. ԺԲ. 36 :



### ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԾԵՐՍ

Մազը ճերմկածին առջևը ոտք ելիր, և ծերը պատուէ, քու Աստուծմէդ վախցիր . ես եմ Տէրը : Ղև. ԺԹ. 32 :

Նմանապէս դուք ե՛րիտասարդներ՝ հնազանդ եղէք ծերերուն : Ա Պետ. Ե. 5 :

### ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՒԱՐԹՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ո՛վ արդարներ՝ Տէրոջմով ուրա՛խ եղէք ու ցնծացէք, ցընծութեամբ երգեցէք դուք ամէնքդ՝ որ սրտով ուղիղ էք : Սաղմ. ԼԱ. 11 :

Ո՛վ արդարներ՝ Տէրոջմով ցնծացէք. ուղիղներուն կը վայլէ օրհնութիւն երգելը : Սաղմ. ԼԳ. 1 :

Իսրայէլը թող ուրախանայ իր

Ստեղծողին վրայ. Սիօնի որդի-քը թող ցնծան իրենց Թագա-ւորին վրայ : Սաղմ. ՃԽԹ. 2 :

---

### ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Քու ժողովուրդիդ մէջը չա-րախօսութիւն ընելու չպտըտիս: Ղևտ. ԺԹ. 16 :

Անոր բերնին խօսքերը կոգիէն կակուղ են, բայց անոր սրտին մէջը պատերազմ կայ. անոր խօսքերը ձէթէն կակուղ են, բայց մերկ սուրեր են : Սաղմ. ԾԵ. 21 :

Ան որ ծածուկ կը խօսի իր ըն-կերին դէմ, պիտի ջնջեմ: Սաղմ. ՃԱ. 5 :

Շատ խօսքերու մէջ յանցանք պակաս չէ. բայց իր շրթունք-ները զսպողը խելացի է : Առակ. Ժ. 19 :



Ծուռ մարդը կռիւ կը հանէ, և քսուն՝ մտերիմ բարեկամները կը զատէ : Առակ. ԺԶ. 28 :

Առանց փայտի կրակը կը մա-րի, և թէ որ քսու չըլլայ, կռի-ւը կը դադարի : Առակ. ԻԶ. 20 :

Մի՛ դատէք՝ որ չդատուիք : Մատթ. Է. 1 :

Վասն զի ան որ կ'ուզէ կեան-քը սիրել՝ ու բարի օրեր տեսնել, իր լեզուն թող դադրեցունէ չա-րութենէն, ու իր շրթունքները նենգութիւն խօսելէն : Ա Պետ. Գ. 10 :

2-2

ՀՀ Ազգային գրադարան
NL0248258

7885